«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«24» օգոստոսի 2023թ. քաղ. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե

Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախագահի ընտրություն և կազմի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
3. 2022-2023 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» 2023-2024 ուսումնական տարվա ժամաբաժանման հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, առարկայական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների, խմբակների ծրագրերի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. Թեմատիկ գրավոր աշխատանքների և գործնական աշխատանքների քանակի ու տեսակների և դրանց տարբերակների հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
8. 2023-2024 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
9. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
10. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
11. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածություն:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

Լսեցին 2. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախագահի ընտրություն և կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց ՄՄ նոր կազմը, որի մեջ միայն դասվարներն են ընդգրկված, նշեց, որ 2023-2024 ուսումնական տարում դպրոցում նպատակահարմար է ստեղծել նոր մեթոդական միավորում, որում կընդգրկվեն «Ֆիզկուլտուրա», «Կերպարվեստ», «Երաժշտություն», «ՆԶՊ» և «Ազգային երգ ու պար» առարկաները, իսկ Տարրական դասարանների մեթոդմիավորման կազմից «Շախմատ» առարկան առաջարկեց տեղափոխել Բնագիտական առարկաների մեթոդմիավորում: Զեկուցողը նաև առաջարկեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահի պաշտոնում թողնել Ռիտա Շալունցին:

Արտահայտվեցին՝ Գ. Ավագյանը, Ա. Միքայելյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին անփոփոխ թողնել Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահին և 2023-2024 ուսումնական տարում նույնպես առաջարկեցին Ռիտա Շալունցի թեկնածությունը, հաշվի առնելով նաև վերջինիս կողմից նախորդ ուսումնական տարում իրականացրած աշխատանքները: Իսկ մեթոդմիավորման թեթևացումը արտահայտվողները ողջունեցին:

Որոշեցին՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախագահ ընտրել Ռիտա Շալունցին և հաստատել մեթոդմիավորման նոր կազմը:

Լսեցին 3. 2022-2023 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփման և նոր ուսումնական տարվա անելիքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարում Տարրական դասարանների մեթոդմիավորման կատարած գործունեության կարևորության, ձեռքբերումների և հաջողությունների մասին, նշեց, որ արձանագրված բացթողումներն անհրաժեշտ է հաշվի առնել, աշխատել այն ուղղությամբ, որ այլևս նման բացթողումներ չարձանագրվեն:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը

Մեթոդմիավորման անդամների կողմից կազմակերպվեց արդյունավետ քննարկում՝ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների և բացթողումների շուրջ: Քննարկվեցին նաև նոր ուսումնական տարվա անելիքներն ու սպասվող փոփոխությունների շուրջ կատարվելիք աշխատանքների մասին հարցերը:

Արտահայտվողներն առաջարկեցին հիմք ընդունելով «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախագահի հաշվետվությունը, ինչպես նաև մեթոդմիավորման 2022-2023 ուսումնական տարվա կատարած աշխատանքները, հաշվի առնելով նաև առկա բացթողումները, գործունեությունը գնահատել լավ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» 2022-2023 ուսումնական տարվա կատարողականը:

Լսեցին 4. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» 2023-2024 ուսումնական տարվա ժամաբաժանման հաստատման հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա վերջին նիստում ներկայացվել և քննարկվել է «Տարրական դասարանների մեթոդմիավորման» կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը: Ռիտա Շալունցը նշեց, որ անցած տարվա համեմատությամբ այս տարի 2-րդ դասարաններում, նոր չափորոշչային պահանջների համապատասխան, «Մայրենի» առարկայից լինելու է շաբաթական 7 ժամ:

Արտահայտվեցին՝ Ա. Աղաբեկյանը, Կ. Մալխասյանը, Ն. Գալստյանը, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ թեպետ նոր չափորոշչով դրույքաչափը 22 ժամից նվազել է 18-ի, սակայն 2-րդ դասարաններում դասվարին միայն 15 ժամ է տրվում, որը այդքան էլ դրական չէ, լավ կլիներ, որ գոնե մեկ դրույք զբաղվածությունը ապահովվեր: Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ հաջորդ ուսումնական տարում դասվարները կարող են ներկայացնել իրենց նախընտրելի թեմաներից արտադասարանական խմբակների ծրագրերը, որոնք կքննարկվեն և հավանության արժանանալու դեպքում կուղարկվեն ԿԳՄՍ՝ երաշխավորության: Խմբակների գործունեության դեպքում դասվարները հնարավորություն կունենան և՛ աշակերտների հետ լրացուցիչ աշխատել, և՛ ունենալ 1 դրույքին մոտ դասաժամ:

Սերգեյ Ավանեսյանը նաև ներկայացրեց դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչների տրամադրման մասին հարցերը, առաջարկեց դպրոցական բաղադրիչը շարունակել տրամադրել այն առարկաներին, որոնց տրամադրվել է նախորդ ուսումնական տարում՝ հավելելով, որ 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դպրոցական և անհատական բաղադրիչների տրամադրումը նույնպես իրականացվել է ըստ սահմանված կարգի: Ավանեսյանը առաջարկեց դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 1 դասաժամը հատկացվում է «Մաթեմատիկա» առարկային:
- 3-րդ և 4-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է. «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ:
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ:
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Ազգային երգ ու պար» առարկային՝ 0.5 դասաժամ:
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ:
- 8-րդ և 9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հանրահաշիվ» առարկային՝ 0.5 դասաժամ:

Սերգեյ Ավանեսյանն առաջարկեց նաև 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին

7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին, ինչպես նաև նախագծային աշխատանքների իրականացմանը: 12 դասաժամից 6 դասաժամը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, իսկ 6 դասաժամը՝ նախագծային աշխատանքների իրականացմանը:

Որոշեցին՝

1. Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա «Տարրական դասարանների մեթոդմիավորման» կազմում ընդգրկված առարկաների ժամաբաժանումը (կցվում է):
2. Առաջարկել դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 1 դասաժամը հատկացվում է «Մաթեմատիկա» առարկային:
   - 3-րդ և 4-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է. «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ:
   - 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ:
   - 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Ազգային երգ ու պար» առարկային՝ 0.5 դասաժամ:
   - 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ:
   - 8-րդ և 9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է. «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հանրահաշիվ» առարկային՝ 0.5 դասաժամ:
3. Առաջարկել անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 5-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին

7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին, ինչպես նաև նախագծային աշխատանքների իրականացմանը: 12 դասաժամից 6 դասաժամը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, իսկ 6 դասաժամը՝ նախագծային աշխատանքների իրականացմանը:

Լսեցին 5. Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, առարկայական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների, խմբակների ծրագրերի հաստատման մասին հարցը

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, դրանով նախատեսված հիմնական աշխատանքները: Զեկուցողը նշեց, որ օրացուցային-

թեմատիկ պլանները կազմվել են առարկայական չափորոշիչներին, ծրագրերին համապատասխան: Արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են ուսուցիչների կողմից, հիմք ընդունելով խմբակների երաշխավորված ծրագրերը:
Զեկուցողը նշեց նաև, որ «Մայրենի» առարկայի համար անհրաժեշտ է առանձնացնել մայրենիի չորս բաղադրիչները՝ մայրենի, խոսք և հաղորդակցում, գրական ունկնդրում և գրավոր աշխատանք, որպեսզի էլեկտրոնային մատյաններում լրացնելիս օրերի համապատասխանությունը չխախտվի:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Տ. Փարսադանյանը, Կ. Մալխասյանը:
Սերգեյ Ավանեսյանը ներկայացրեց բոլոր պահանջները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել օրացուցային-թեմատիկ պլանները կազմելու ժամանակ: Վերջինս նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններում օրերն անհրաժեշտ է գրել միայն առաջին կիսամյակի համար, նշումները կատարել մատիտով՝ հետագա փոփոխությունների անհրաժեշտության դեպքում շտկումներ կատարելու նպատակով: Ավանեսյանը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա համար առկա են արտադասարանական խմբակների ծրագրերը, որոնց մեծ մասը դպրոցի կողմից ԿԳՄՍ նախարարությանը ներկայացված և երաշխավորված ծրագրերն են: Սակայն, նշեց, որ որոշ խմբակների համար անհրաժեշտ է օգտվել այլ դպրոցների կողմից ներկայացված և երաշխավորված ծրագրերից: Մասնավորապես, «Փոքրիկ երգիչներ», «Մայրենի», «Մանկական գրականություն», «Ազգային երգ ու պար» խմբակների համար անհրաժեշտ է օգտվել համապատասխանաբար Երևանի Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցի, Պռոշյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցի, Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոցի, Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 3 դպրոցի կողմից ներկայացված և երաշխավորված ծրագրերից:
Կարինե Մալխասյանը հիշեցրեց, որ ՕԹՊ-ները կարող են կազմվել առաջնորդվելով առարկայական ծրագրերով և հիմք ընդունելով դպրոցում կիրառվող դասագրքերը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել և հաստատել Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, ուսումնական պլանը, օրացուցային-թեմատիկ պլանները, առարկայական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները,երաշխավորել գործածության Երևանի Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցի, Պռոշյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցի, Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոցի, Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 3 դպրոցի կողմից կազմված «Փոքրիկ երգիչներ», «Մայրենի», «Մանկական գրականություն», «Ազգային երգ ու պար» խմբակների համար նախատեսված ծրագրերը:

Լսեցին 6. Թեմատիկ գրավոր աշխատանքների և գործնական աշխատանքների քանակի ու տեսակների և դրանց տարբերակների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ ինչպես նախորդ ուսումնական տարիների ընթացքում, այս ուսումնական տարվա համար նույնպես պետք է հստակ սահմանվեն յուրաքանչյուր առարկայից թեմատիկ գրավոր աշխատանքների և գործնական աշխատանքների քանակն ու տեսակները, դրանց տարբերակները: Զեկուցողն առաջարկեց զուգահեռ դասարանների դասվարներին ըստ առարկաների քննարկել թեմատիկ գրավոր աշխատանքների և գործնական աշխատանքների քանակն ու տեսակները, դրանց տարբերակները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Սերգեյ Ավանեսյանը:
Արտահայտվողներն առաջարկեցին թեմատիկ գրավոր աշխատանքները կազմել հաշվի առնելով ուսուցողական աշխատանքները և անցած թեմաները,

ինչպես նաև ուշադրություն դարձնել դրանց տեսակներին ու տարբերակներին: Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում, որպեսզի 2023-2024 ուսումնական տարվանից սկսած 1-9-րդ դասարանների բոլոր թեմատիկ գրավոր աշխատանքները, գործնական աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը հաստատված լինեն մեթոդական միավորումների կողմից, որից հետո կիրառվեն: Ինչը նաև հիմնավորեց այն հանգամանքով, որ զուգահեռ դասարաններում նույն առարկաներից աշակերտները գրեն նույնաբովանդակ աշխատանքներ, որպեսզի նաև ըստ դասարանների միջին որակական արժեքները նույնպես հնարավոր լինի պատշաճ կերպով հաշվարկել

Որոշեցին՝ Ապահովել ուսումնական տարվա ընթացքում սահմանված գրավոր աշխատանքների, գործնականների քանակն ու բազմազանությունը՝ համապատասխան հավելվածի, ինչպես նաև սկսած 2023-2024 ուսումնական տարվանից բոլոր առարկաներից տրվող թեմատիկ գրավոր աշխատանքները, գործնական աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը հաստատել մեթոդմիավորման կողմից, որից հետո կիրառել (կցվում է):

Լսեցին 7. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2023-2024 ուսումնական տարվանից սկսած նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան: Ըստ այդ չափանիշների 2023-2024 ուսումնական տարում 2-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների

գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Արտահայտվեցին՝ Ռիտա Շալունցը

Արտահայտվողն առաջարկեց ձեռքի տակ ունենալ Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և ըստ անհրաժեշտության օտգվել դրանից՝ պահպանելով համապատասխան սկզբունքները, ինչպես նաև առաջարկեց հավանության արժանացնել առաջարկվող ձևերն ու մեթոդները և սույն հարցը քննարկել նաև մանկավարժական խորհրդի նիստում:

Որոշեցին՝ Հաստատել նոր ՀՊՉ-ների համաձայն 2-րդ դասարաններում գնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, ինչպես նաև Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների համար կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.

2023-2024 ուսումնական տարում 2-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.

8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) Տ-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Լսեցին 8. 2023-2024 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, 2023-2024 ուսումնական տարում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող հիմնական աշխատանքները, այդ աշակերտների համար պարզեցման եղանակները, ինչպես նաև կոնկրետ օրինակներով ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացումը: Զեկուցողը նշեց նաև, որ 2023-2024 ուսումնական տարվա մեկնարկին դպրոցն ունի 18 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, 9-ը՝ տարրական դասարաններում, որոնց հետ աշխատանքն անհրաժեշտ է իրականացնել հատուկ սահմանված կարգով: Զեկուցողն առանձին-առանձին անդրադարձ կատարեց բոլոր աշակերտներին և նշեց նրանց հետ իրականացվող աշխատանքների գրաֆիկը և կարևորեց մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն մատուցող մասնագիտական խմբի կողմից սովորողների ԱՈՒՊ-ով նախատեսված ուսումնառության արդյունքների ապահովումը:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ դպրոցում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքները միշտ պատշաճ են իրականացվել ու նախորդ ուսումնական տարին էլ բացառություն չէր: Առանձնահատուկ անդրադարձ կատարվեց ծանր խնդրով աշակերտներին, որոնց հետ աշխատանքն առանձնահատուկ հմտություններ են պահանջում: Արտահայտվողը կարևորեց, որ ԱՈՒՊ-ները լրացվեն նոր կարգին համապատասխան, պարզեցումները կատարվեն հիմք ընդունելու ԿԱՊԿՈՒ աշակերտների կարողություններն ու ընդունակությունները: Սերգեյ Ավանեսյանը կարևորեց նաև դիտարկման թերթիկների լրացումը, ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժի ու հոգեբանի հետ համատեղ ու համագործակցային աշխատանքը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, աշխատանքներն ու պարզեցումներն իրականացնել սահմանված պահանջներին համապատասխան, սահմանված կարգով կիրառել դիտարկման թերթիկները:

Լսեցին 9. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման անհրաժեշտության մասին, քանի որ դասի այս տիպերը լինում են օրինակելի, ուսուցանող, որտեղ հաշվի են առնվում դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մանրուքները: Կարևորվեց նաև բաց դասերի կազմակերպումը, քանի որ հնարավորություն է ստեղծվում ուսուցիչների ձեռք բերած դրական փորձը տարածել և մասայականացնել: Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, բաց դաս-միջոցառումների, միջոցառումների ժամանակացույցի նախագիծը:

Արտահայտվեցին՝ Ռիտա Շալունցը:

Ռիտա Շալունցն առաջարկեց ինչպես նախորդ ուսումնական տարվա, ընթացքում, 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նույնպես առաջորդվել նույն սկզբունքով և բաց դասերը, բաց դաս-դաս միջոցառումներն իրականացնել սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Որոշեցին՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է:

Լսեցին 10. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվանից սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ,

որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները: Ավանեսյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը համապատասխանում է կարգի պահանջներին, ինչպես նաև առաջարկեց 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսում, դրանք արձանագրել արձանագրությունների համապատասխան ձևանմուշի մեջ, իսկ կիսամյակի ավարտին դրանք սահմանված կարգով արխիվացնել:

Արտահայտվեցին՝ Ռիտա Շալունցը, Ա. Հարությունյանը

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ երկու ուսումնական տարիների փորձը դրական է և նպատակահարմար գտան 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նույնպես աշխատել նույն սկզբունքով:

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսում, դրանք արձանագրել արձանագրությունների համապատասխան ձևանմուշի մեջ: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները և ներկայացնել մանկավարժական խորհդրի ամփոփիչ նիստում:

Լսեցին 11. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն այսուհետ պետք է իրականացվի 2023 թվականի սեպտեմբերի 4-ին №113-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
   ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
   բ. դասապատրաստումներին աջակցելու.
   գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
2) Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ չի իրականացվում միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ ունենալու.
2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու դեպքերում: Զեկուցողը ներկաների ուշադրությունը հրավիրեց

վերոնշյալ 2-րդ կետին և շեշտեց, որ երկարօրյայի կազմակերպման և գնահատման կարգի միջև առկա է որոշակի հակասություն: Գնահատման կարգը չի նախատեսում 5-րդ և 7-րդ դասարաններում ընթացիկ գնահատում, սակայն երկարօրյայի կազմակերպման կարգում նշվում է, որ սովորողների կողմից որևէ առարկայից 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու դեպքերում վերջինս պետք է մնա երկաօրյա խմբակի:

Զեկուցողն առաջարկեց ուսուցման ընթացքում դիտարկել այն աշակերտներին, որոնք ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից գրանցում են ցածր արդյունքներ, նրանց կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային մատյանում տվյալ թեմաներից գնահատել 1-3 գնահատական, այսպիսով ապահովել 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու պայմանը և այդպիսով տվյալ աշակերտին ընդգրկելերկարօրյա խմբերում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ կարգերի հակասությունն ակնհայտ է, սակայն համաձայնեցին զեկուցողի հետ, որ պետք է դիտարկել հետ մնացող աշակերտներին, ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից ցածր արդյունքներ գրանցած աշակերտներին ընդգրկել երկարօրյա խմբերում, ինչպես նաև առաջարկությամբ հանդես գալ ու փոփոխություն կատարել վերոնշյալ կարգերում՝ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Որոշեցին՝ 1. Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն:

2. Ուսուցման ընթացքում դիտարկել այն աշակերտներին, որոնք ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից գրանցում են ցածր արդյունքներ, նրանց կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային մատյանում տվյալ թեմաներից գնահատել 1-3 գնահատական, այսպիսով ապահովել 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու պայմանը և այդպիսով տվյալ աշակերտին ընդգրկելերկարօրյա խմբերում:

3. Հանդես գալ գնահատման և երկարօրյայի կարգերում փոփոխություն կատարելու առաջարկությամբ՝ դրանց միջև համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«19» սեպտեմբերի 2023թ. քաղ. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները:

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
5. II դասարաններում նոր ՀՊՉ-ով դասավանդման խնդիրները:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» կողմից օրացուցային-թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. Մեթոդմիավորման կողմից թեմատիկ, գործնական աշխատանքներ կազմելու, տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների հետ կապված հարցերի քննարկում և հանձնարարականներ:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
8. Մանկավարժական զեկուցում՝ «Տեքստի հետ աշխատելու մեթոդները մայրենիի դասաժամին» թեմայով:
(զեկուցող՝ Կ. Մալխասյան)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում: Ռ. Շալունցը, ևս մեկ անգամ, 2-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչներին ներկայացրեց նոր չափորոշիչներին համապատասխան էլեկտրոնային մատենավարության վերաբերյալ կետերը, բնութագրիչների ընտրության և պահպանման կարգը:

Արտահայտվեցին՝ Գ. Ավագյանը:

Գ Ավագյանը նշեց, որ և՛ ՕԹՊ-ները և ՕԴՊ-ները շատ կարևոր են և օգնում են ուսուցիչներին դասերը կազմակերպել պատշաճ, պլանավորված, սահմանված պահանջներին համապատասխան։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Արտահայտվեցին՝ Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված թերությունները, առաջարկեց ժամանակին կատարել գրանցումները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար։ Շեշտեց, որ սահմանված կարգով պարտադիր է էլեկտրոնային մատյաններում թեմատիկ պլանավորումների կցումը։

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետից խախտում), լրացված թեմաների անհամապատասխանություն ՕԹՊ-ներին, որոշ աշակերտների մոտ գնահատականների բացակայություն։ Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենշաբաթյա ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին։

Որոշեցին՝ Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին։

Լսեցին 4. Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների կազմակերպումը ոչ միայն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» անդամների, այլ նաև մյուս մեթոդմիավորումների կազմում ընդգրկված անդամների միջև՝ ովքեր դասավանդում են տարրական դասարաններում, ինչպես նաև կատարել դիտարկումներ յուրաքանչյուրն իր դասարանում՝ լրացնելով դիտարկման թերթիկները։

Արտահայտվեցին՝ Ռիտա Շալունցը, Տաթևիկ Փարսադանյանը

Ռիտա Շալունցը նշեց, թե որքան արդյունավետ են փոխադարձ դասալսումները։ Հավելելով, որ փոխադարձ դասալսումների արդյունքում ուսուցիչները հնարավորություն են ստանում ոչ միայն ձեռք բերել նոր հմտություններ ու կարողություններ, այլ նաև առանձնակի ուշադրություն է դարձվում միջառարկայական կապերին։ Ինչպես նաև, դասալսումները հնարավորություն են տալիս, այլ առարկաներից, ուսումնական պրոցեսում դիտարկել իրենց աշակերտների ակտիվությունը և կատարել աշխատանքների գնահատում։

Տաթևիկ Փարսադանյանը կարևորեց ավագ գործընկերների մոտ կատարված փոխադարձ դասալսումները, ինչի շնորհիվ մանկավարժությամբ նոր զբաղվող ուսուցիչները հնարավորություն են ստանում ձեռք բերել նոր հմտություններ, կարողություններ, ծանոթանալ ուսումնական պրոցեսում արդիական և կիրառվող մեթոդներին ու հնարներին։

Որոշեցին՝ Հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ, դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով գործածել ուսուցման արդի մեթոդներ ու հնարներ, ՏՀՏ-ներ, կատարել քննարկումներ հատկապես ուշադրություն դարձնելով 2-րդ դասարաններում ուսումնասիրվող առարկաներին։

Լսեցին 5. II դասարաններում նոր ՀՊՉ-ով դասավանդման խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին մասնակցել են դպրոցի բոլոր դասավարները: II դասարաններում դասավանդող դասվարները ծանոթ են բոլոր փոփոխություններին և նորամուծություններին:

Արտահայտվեցին՝ Ն. Գալստյանը, Ա. Աղաբեկյանը, Կ. Մալխասյանը:

Աղաբեկյանը ամենամեծ խնդիրը համարում է դասագրքերի բացակայությունը, թեպետ աշակերտները գրքի պատճենված տարբերակներն ունեն, բայց այդ տարբերակը համարում է անարդյունավետ:

Մալխասյանը նշեց, որ տարրական դասարաններում աշակերտերի համար շատ կարևոր են գրքի գունեղ և նկարազարդ լինելը:

Գալստյանը փոխանցեց ծնողների առաջարկը գրքերը ինքնուրույն ձեռք բերելու մասին:

2-րդ դասարաններում դասավանդող դասվարները նշեցին, որ կրթական աշխատանքներում մեծ խնդիրների հետ չեն բախվել և կարողանում են համատեղ քննարկումների միջոցով լուծումներ գտնել:

Որոշեցին՝ Շարունակել աշխատանքներն ըստ թեմատիկ պլանավորման և նոր չափորոշչի պահանջներին համապատասխան: Դասանյութերը պատճենել դասագրքից՝ մինչև գրքերը կլինեն:

Լսեցին 6. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» կողմից օրացուցային-թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրացուցային-թեմատիկ պլաններում տեղ գտած բացթողումները՝ նշեց, որ պետք է ավելի ուշադիր լինել նոր չափորոշիչների պահանջներին: Զեկուցողը շեշտեց, որ ըստ անհրաժեշտության հաստատված ՕԹՊ-ների թեմատիկ հաջորդականությունից շեղումները պետք է քննարկվեն ՄՄ նիստում, որից հետո դրանց հիմնավորությունը հաստատվելուց հետո կթույլատրվի մատենավարության ընթացքում լրացումներն իրականացնել ՕԹՊ-ներից շեղումով:

Արտահայտվեցին՝ Ա. Միքայելյանը, Կ. Պողոսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ լինում են դեպքեր, երբ անհրաժեշտություն է առաջանում, օրինակ՝ փոխել թեմատիկ գրավոր աշխատանքի օրը, հաշվի առնելով ՕԹՊ-ով դրա համար նախատեսված օրվա ընթացքում աշակերտների բացակայությունը:

Որոշեցին՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» կողմից օրացուցային-թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների քննարկման և հաստատման մասին հարցն ընդունել ի գիտություն և հնարավոր անհրաժեշտ փոփոխությունները կատարել բացառապես ՄՄ նիստում քննարկելուց հետո:

Լսեցին 7. Մեթոդմիավորման կողմից թեմատիկ գործնական աշխատանքներ կազմելու, տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների հետ կապված հարցերի քննարկման և հանձնարարականների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց թեմատիկ գրավոր աշխատանքների նոր ձևի ներդրումը, քանակի հետ կապված հարցը 2-րդ դասարաններում՝ կապված նոր չափորոշիչների ներդրման հետ:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ նպատակահարմար է համարում, որ 2023-2024 ուսումնական տարվանից սկսած տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների բովանդակությունը փոխվի և նախորդ ուսումնական տարիների ընթացքում տրվող թելադրության փոխարեն աշակերտներն աշխատեն թեստերով:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Նունե Գալստյանը, Անուշ Աղաբեկյանը, Կարինե Մալխասյանը
Ռիտա Շալունցը նշեց, որ անհրաժեշտ է հետևել եռամակարդակ թեստեր կամ աշխատանքներ կազմելու սկզբունքին:
Նունե Գալստյանը, Անուշ Աղաբեկյանը, Կարինե Մալխասյանը առաջարկեցին 2-րդ դասարանում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքը չտալ, իսկ 3-4-րդ դասարանների համար կազմել ընտրովի առաջադրանքներով աշխատանքներ՝թեստեր՝ 4 տարբերակներով:

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարում 2-րդ դասարաններում տնօրենության գրավոր աշխատանք չտալ, իսկ 3-4-րդ դասարաններում՝ թեստային աշխատանք՝ 4 տարբերակով:

Լսեցին 8. Մանկավարժական զեկուցում՝ «Տեքստի հետ աշխատելու մեթոդները մայրենիի դասաժամին» թեմայի շուրջ:

(զեկուցող՝ Կ. Մալխասյան)

Զեկուցողը նշեց, որ թեման արդիական է, որ ժամանակակից ուսուցիչը պետք է կարողանա կիրառել տարբեր մեթոդ-հնարներ: Այսօր ուսուցչի խնդիրն է ավելի շատ աշակերտների գործունեության նպատակաուղղուն է, սովորել սովորեցնելը, քան միայն գիտելիքներ հաղորդելը, քանի որ միայն ուսուցման ընթացքում հնարավոր չէ այնքան տեղեկություն փոխանցել և սովորեցնել, որքան անհրաժեշտ է նրա զարգացման համար: Ուստի, այսօր համար մեկ նպատակն է գրքից կտրվելու կարողության ձևավորումը:

Արտահայտվեցին՝ Ա. Դոլունցը, Տ. Փարսադանյանը
Զեկույցը արդիական էր և հաճելի էր լսել Մալխասյանի դիրքորոշումը այս թեմայի շուրջ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տեքստի հետ աշխատելու մեթոդները մայրենիի դասաժամին» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«11» հոկտեմբերի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները:

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը և ուսուցչի օգնականները:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. I դասարաններում՝ «Ա»-ի ուսուցման դասերի կազմակերպում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանում և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպում այդ կարիքները բավարարելու ուղղությամբ:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Ուսման մեջ հետ մնացող աշակերտների դժվարությունները, 2-րդ դասարաններում հետ մնացող աշակերտներին երկարօրյա խմբերում ընդգրկելը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. Աշնանային արձակուրդի ժամանակացույցի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. Մանկավարժական զեկուցում՝ «Գույները մարդու կյանքում» թեմայով:
(զեկուցող՝ Անուշ Աղաբեկյան)
9. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Ի դասարաններում՝ «Ա»-ի ուսուցման դասերի կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ Ի դասարաններում «Ա» տառ-հնչյունի ուսուցման դասերի կազմակերպումը, այբբենական շրջանի մուտքը անհրաժեշտ է կազմակերպել տպավորիչ՝ աշակերտների մոտ ձևավորելով հետաքրքրության զգացում դեպի տառուսուցման շրջանը:

Արտահայտվեցին՝ Ա. Դոլունցը, Կ. Պողոսյանը

Դոլունցն իր ելույթում նշեց, որ նախատեսել են դաս-միջոցառումներ, որում ներառել են երգ, պար, բեմականացում, արտասանություններ: Պողոսյանն իր ելույթում նշեց, որ ավելի հակված են հաղորդման դասի գաղափարին և «Ա»-ի ուսուցումը կկազմակերպի այդ եղանակով:

Որոշեցին՝ Առաջին դասարանների «Ա» տառ-հնչյունի ուսուցման դասերը կազմակերպել աշնանային արձակուրդից հետո. Ի «Գ» դասարանը՝ 03.11.2023թ., Ի «Ա» և Ի «Բ» դասարանները՝ 06.11.2022թ-ին:

Լսեցին 4. Սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանման և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպման, այդ կարիքները բավարարելու ուղղությամբ հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանման և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպման վերաբերյալ ելույթում նշեց, որ սկսնակ ուսուցիչների կարիքները ճշգրիտ հասկանալու համար անհրաժեշտ է կատարել դասալսումներ, կլոր սեղանի շուրջ քննարկումներ և անհրաժեշտ խորհրդատվությունների և օրինակների օգնությամբ լրացնել փորձի պակասը:

Արտահայտվեցին՝ ՄՄ աղնամները:

Անուշ Աղաբեկյանը սկսնակ ուսուցիչներին հորդորեց օրվա ընթացքում ազատ ժամերը տրամադրել դասալսումների կազմակերպմանը՝ զուգահեռ դասարաններում և փորձառու ուսուցիչների մոտ: ՄՄ սկսնակ ուսուցիչները կարևորեցին փոխադարձ դասալսումները և նշեցին, որ մեծ ատրաստակամության մասնակցում են դասալսումների և փոխադարձ դասալսումների, ինչը օգնում է նրանց ավելի կատարելագործել իրենց մանկավարժական կարողությունները, հմտությունները:

Որոշեցին՝ Սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանման և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպման, այդ կարիքները բավարարելու ուղղությամբ շարունակել իրականացնել դասալսումներ և փոխադարձ դասալսումներ:

Լսեցին 5. Ուսման մեջ հետ մնացող աշակերտների դժվարությունները, 2-րդ դասարաններում հետ մնացող աշակերտներին երկարօրյա խմբերում ընդգրկելը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը:

Երկարօրյա ուսուցումը կազմակերպվելու է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվելու են՝

- Ծնողների դիմումի հիման վրա (վճարովի սկզբունքով), որոնք միտված են սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակով: Սոցիալապես

անապահով ընտանիքների սովորողների համար երկարօրյա խմբում ծառայությունների մատուցումը կարող է կազմակերպվել անվճար:

- Հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ցածր առաջադիմություն ունեցողներին կրթական աջակցություն տրամադրելու նպատակով:

Զեկուցողը նշեց, որ հիմք ընդունելով հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 3-րդ կետը, տնօրենի հրամանով հոկտեմբերի 1-ից դպրոցում ստեղծվել են երկարօրյա խմբեր: Զեկուցողը հավելեց, որ ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողներին ուսումնառության արդյունքները բարելավելու համար երկարօրյա խմբերը ձևավորվում են ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ սկսած հոկտեմբերի 1-ից, երկրորդ կիսամյակում՝ սկսած փետրվարի 1-ից, համալրվում են ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության: Սովորողի երկարօրյա պարապմունքները դադարեցվում են ուսումնական պլանով սահմանված առարկայի դասավանդման ժամանակ առաջադիմության դրական արդյունք արձանագրելու դեպքում:

Զեկուցողը նշեց նաև, որ հոկտեմբեր ամսվանից սկսած դպրոցում գործում են երկարօրյա խմբերը: Առաջին ամսվա ընթացքում երկարօրյա խմբում ընդգրկվել են 2-րդ դասարանի այն աշակերտները, որոնք «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով ունեցել են ցածր արդյունքներ: Հոկտեմբեր ամսվա ընթաքցում տվյալ երկարօրյա խմբում ընդգրկվել է 13 աշակերտ, իսկ որպես երկարօրյայի խմբավարներ ընտրվել են Արփինե Ծատրյանն ու Հասմիկ Տատինցյանը, որոնք ունեն համապատասխան կրթություն: Զեկուցողը հավելեց, որ աշխատանքները վերահսկվում են ՄԿԱ գծով փոխտնօրենի կողմից: Ուսուցչուհիները շաբաթվա ընթացքում ունեցել են մեկական հանդիպում, իսկ աշխատանքները՝ շարունակվում են, քանի որ սահմանված վերջնարդյունքներին աշակերտները դեռ չեն հասել: Նշվեց նաև, որ երկարօրյա խմբերն ըստ անհրաժեշտության կհամալրվեն:

Արտահայտվեցին՝ Վ. Գրիգորյանը, Ռ. Շալունցը:

Գրիգորյանը նշեց, որ քանի որ բոլոր դասարաններում էլ կան աշակերտներ, ովքեր հետ են մնում դասարանի մնացած աշակերտներից և դա պատճառ է ընկչվածության, ապա այս նախաձեռնությունը կլինի միայն ի նպաստ աշակերտի:

Շալունցն իր ելույթում նշեց, որ երկարօրյայի մասնակից աշակերտները չյուրացրած թեմաները կկարողանան ավելի խորն ուսումնասիրել, ժամանակ կունենան ևս մեկ անգամ ծանոթանալ թեմային ավելի մատչելի եղանակով և դասից տարբերվող միջավայրում:

Որոշեցին՝ Զեկուցումը և երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգն ընդունել ի գիտություն:

Լսեցին 6. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված նախորդ ուսումնական տարվա թերությունները, առաջարկեց ժամանակին կատարել գրանցումները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետից խախտում), լրացված թեմաների անհամապատասխանություն ՕԹՊ-ներին, որոշ աշակերտների մոտ գնահատականների բացակայություն: Հորդորեց լինել ավելի ուշադիր և

սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենշաբաթյա ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին:

Որոշեցին՝ Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

Լսեցին 7. Աշնանային արձակուրդի ժամանակացույցի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց աշնանային արձակուրդի ժամանակացույցը նշեց, որ աշնանային արձակուրդը սկսվում է.

- I դասարաններում՝ հոկտեմբերի 16-29-ը ներառյալ:
- II դասարաններում՝ հոկտեմբերի 23-29-ը ներառյալ:
- III դասարաններում՝ հոկտեմբերի 23-29-ը ներառյալ:
- IV դասարաններում՝ հոկտեմբերի 23-29-ը ներառյալ:

Այդ ժամանակահատվածի համար անհրաժեշտ է աշակերտներին տալ հանձնարարություններ՝ առաջադրանքներ, ընթերցանության համար նյութեր:

Հոկտեմբերի 30-ից բոլոր դասարաններում վերսկսվում է դասապրոցեսը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավագյանը:

Ավագյանը նշեց, որ անհրաժեշտ է 4-րդ դասարաններում աշակերտներին աստիճանաբար նախապատրաստել գիտելիքների ստուգման գործընթացին և արձակուրդների հանձնարարություններում նպատակահարմար է ներառել նաև դրա հետ կապված կետեր:

Որոշեցին՝ Նախքան աշակերտներին աշնանային արձակուրդի ուղարկելը տալ հանձնարարություններ և տեղեկացնել արձակուրդների ժամանակացույցի մասին:

Լսեցին 8. Մանկավարժական զեկուցում՝ «Գույները մարդու կյանքում» թեմայով:

(զեկուցող՝ Անուշ Աղաբեկյան)

Զեկուցողը իր խոսքը սկսեց Իտտենի խոսքերով՝ «Գույներն իրենց ողջ գեղեցկությամբ ու ներքին էությամբ բացվում են միայն նրա առջև, ով սիրում է այդ աշխարհը: Գույներից կարող է օգտվել յուրաքանչյուրը, սակայն միայն նրան, ով նվիրվում է այդ աշխարհին, գույները թույլ են տալիս հասկանալ իր գաղտնիքները:»

«Գույներիի ուժը կայանում է նրանում, որ այն կարող է անմիջականորեն ազդել մարդու ներաշխարհի վրա: Երբ մենք ընտրում ենք որևէ գույնի հագուստ կամ այլ բան, այդ պահին ակամայից ինքնարտահայտվում ենք (ըստ ուսումնասիրած գրականության՝ հավասարակշռում ենք մեր ներքին էներգիան): Գույների օգնությամբ մարդը կարող է բուժել ֆիզիկական, հոգեկան և հոգևոր տկարությունը: Շրջապատելով մեզ մեր նախընտրած գույներով, մենք կարծես բուժում ենք ինքներս մեզ: Գույնն առաջացնում է հոգեբական ռեակցիա. ստեղծում է կամ տաք, կամ էլ սառը միջավայր (արտացոլում տարվա գույները): Ես գտնում եմ, որ վարկածը՝ եթե գույնն ազդում է մարդու տրամադրության վրա, ապա մենք կարող ենք ստեղծել լավ, հաճելի տրամադրություն հաղորդող պայմաններ»,- իր խոսքում նշեց զեկուցողը և ներկայացրեց գործնական աշխատանքը, որը կատարել էր իր դասարանում:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Ա. Դոլունցը

Ռիտա Շալունցն իր խոսքում նշեց, որ մարդու տրամադրության վրա տարբեր գույների ազդեցության հետազոտությունը բավական հետաքրքիր և հաճելի թեմա էր, որը նաև շատ ուսուցողական էր: Հատուկ շնորհակալություն հայտնեց զեկուցողին, նման գեղեցիկ զեկույցի համար:

Դոլունցն առաջարկեց, գործնական թեստերը նաև ուսուցիչների հետ անցկացնել:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Գույները մարդու կյանքում» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է):

Լսեցին 9. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդող ժամանակահատվածում իր, տնօրենի, մեթոդմիավորման նախագահի, դասարանների դասղեկների և Հումանիտար առարկաների ու մյուս մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ, դասերի դիտարկումներ, որոնց ընթացքում արձանագրվել է, որ 2-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, մատենավարությունը կազմակերպված էր օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ օրվա դասի պլանների մեջ ըստ պահանջի սահմանված էին տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը, ՀՊՉ համապատասխան կոդերը, խարվող հասկացությունները: Օրվա դասի պլանի գործընթացի քայլերում սահմանված էին այն քայլերը, որոնց համաձայն իրականացվում է դասապրոցեսը: Հստակ նշված էին ռեսուրսներն ու մեթոդները: Միևնույն ժամանակ զեկուցողը նշեց, որ որոշակի խնդիրներ նկատվեցին առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հետ կապված: Նկատելի էր, որ որոշ ուսուցիչներ ամբողջապես չեն ուսումնասիրել իրենց առարկաների ծրագրերը, ինչը նաև հանգեցնում է առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների ոչ ամբողջական պատկերացմանը: Զեկուցողը նշեց, որ քանի որ օրվա դասի պլանի մեջ հստակ սահմանված է տվյալ օրվա թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել, թե դասի ավարտին ինչ վերջնարդյունքներ պետք է ապահովեն, ինչն ուսուցիչների մոտ հաջողվում է:

Զեկուցողը նշեց, որ առանձնակի ուշադրություն է դարձվել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածությանն ու գնահատման վերաբերյալ հարցերին: Աշակերտների ներգրավվածությանն հետ զեկուցողը նշեց, որ խնդիրը հիմնականում կապված է այն աշակերտների հետ, որոնք հետ են մնում, շեշտեց, որ այդ աշակերտներն ընդգրկվում են երկարօրյա խմբերում: ԿԱՊԿՈՒ աշակերտների ամբողջական ներգրավվումը դասապրոցեսին իրականացվում է հիմնականում ուսուցչի օգնականների օգնությամբ և նրանց համար սահմանված ԱՈՒՊ-ների համաձայն: Որոշ աշակերտների հետ աշխատանքն է իրականացվում հոգեբանի կողմից, որպեսզի հնարավոր լինի նրանց նույնպես ներգրավվել դասապրոցեսին:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց գնահատման հետ կապված հարցերին, նշեց, որ հիմնականում բացթողում է նկատում գնահատման դեպքում. որոշ ուսուցիչներ ամբողջապես չեն պատկերացնում գնահատման նոր համակարգի պահանջները, ինչի պատճառով չեն կարողանում կիրառել այն ամբողջ գործիքակազմը, որն ընձեռում է հայտորոշիչ, ձևավորող ամփոփիչ գնահատումները:

Զեկուցողն առաջարկեց ուշադրություն դարձնել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգին և այս ուղղություններով կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ անհրաժեշտ են համարում լրացուցիչ հանդիպումներ, քննարկումներ կազմակերպել՝ ունեցած գիտելիքները բարելավելու, թարմացնելու ուղղությամբ։

Որոշեցին՝ 1. 2-րդ դասարաններում իրականացնել ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության, 2 ամիսը 1 անգամ հարցը քննարկել ՄՄ նիստի ընթացքում։

2. ՄՄ նիստերի ընթացքում իրականացնել քննարկումներ առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգի շուրջ։

3. Դպրոցում կազմակերպել վերապատրաստումներ գնահատման, կարողունակությունների, վերջնարդյունքների և դասապրոցեսում աշակերտների ներգրավվածության շուրջ, դրանում ներգրավելով դպրոցի բոլոր մանկավարժներին։

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«13» նոյեմբերի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները:

Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Տարրական դասարաններում աշնանը նվիրված միջոցառումների անցկացում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցություն և ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ ընթացիկ աշխատանք:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
6. Մանկավարժական զեկուցում՝ «Տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական վարպետություն» թեմայով:
(զեկուցող՝ Ա. Հարությունյան)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Ռ. Շալունցը նշեց, որ առաջին դասարաններում, նշված օրերին, անց են կացվել «Ա» հնչյուն-տառի ուսուցման դասերը:
Աշնանային արձակուրդներից առաջ բոլոր դասարաններում տրվել են հանձնարարություններ՝ թեմաները ամրապնդելու միտումով:
Էլեկտրոնային մատյաններում կատարվել են բոլոր լրացումները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Սերգեյ Ավանեսյանը
Ս. Ավանեսյանը զովասանքի խոսքերով շնորհավորեց I դասարաններում՝ «Ա»-ի շնորհանդեսի կապակցությամբ:
Մասնակից ուսուցիչները ևս կարևորեցին դաս-միջոցառման նշանակությունը տարրական դասարաններում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Տարրական դասարաններում աշնանը նվիրված միջոցառումների անցկացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ Տարրական դասարանների մեթոդմիավորման անդամների կողմից բոլոր դասարաններում անց են կացվել միջոցառումներ՝ նվիրված գունեղ և բերքառատ աշնանը: Զեկուցողը հավելեց, որ միջոցառումներն անց են կացվել դասարաններում, ուսուցիչները և ծնողները ձևավորել էին դասասենյակները աշնանային գույներով, աշնանային բերքահավաքի առատ բերք ու բարիքով, գեղեցիկ ձևավորված միրգ ու բանջարեղենով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ աշակերտները ներկայանում էին յուրահատուկ համարներով, գեղեցիկ երգ ու պարով, արտասանությամբ, բեմականացմամբ, նկարների ցուցահանդեսով, շարադրությունների ընթերցմամբ: Նշվեց, որ միջոցառումները տարբերվող էին և հետաքրքիր:

Դասվարները ներկայացրեցին միջոցառումների հակիրճ բնութագիրը:

Վարդ Գրիգորյանը ասաց, որ անցած տարվա միասնակ միջոցառումը, որն անց էր կացվել դպրոցի բակում ավելի նպատակահարմար էր, տարբերվող:

Անուշ Աղաբեկյանն ասաց, որ կարելի է կազմակերպել նաև համատեղ էքսկուրսիա դեպի մոտակա անտառի բացատ:

2-րդ «Գ» դասարանի դասվար Կարինե Մալխասյանը նշեց, որ իր դասարանում անց է կացվել «Աշնան հմայքը» խորհագրով միջոցառում, հավելեց, որ թեկուզ աշակերտները դեռևս փոքր են, բայց, այնուամենայնիվ, ցանկացել է աշակերտների հետ կազմակերպել այց գեղեցիկ միջոցառումը, որում անմասն չի մնացել նաև երաժշտության ուսուցչուհի Թամարա Հովհաննիսյանը: Ռ. Շալունցը նշեց, որ թեպետ դասարանում աշակերտների թիվը մեծ է, սակայն միջոցառմանը ընդգրկված էին բոլոր աշակերտները և յուրաքանչյուրն իր փոքրիկ արտասանությամբ ելույթ ունեցավ, ինչպես նաև խմբով կատարեցին երգեր և պարեր:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Տարրական դասարաններում աշնանը նվիրված միջոցառումների անցկացման մասին զեկուցումը:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված նախորդ ամսվա թերությունները, առաջարկեց ժամանակին կատարել գրանցումները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

ՄՄ նախագահը նշեց, որ ստուգման արդյունքում նկատել է, որ որոշ ուսուցիչների մոտ տնային աշխատանքի բաժնում բացակայում են գրառումները, հատկապես «Մայրենի» առարկայի համար նշված չեն, թե դասը այդ օրվա համար ինչ է հանձնարարված՝ կարդալ, պատմել, անգիր և այլն:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետից խախտում), լրացված թեմաների անհամապատասխանություն ՕԹՊ-ներին, որոշ աշակերտների մոտ գնահատականների բացակայություն: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենշաբաթյա ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին:

Որոշեցին՝ Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

Լսեցին 5. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցություն և ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ ընթացիկ աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ հատուկ մանկավարժի, հոգեբանի և ուսուցչի օգնականների հետ անհրաժեշտ է կազմակերպել ամենօրյա քննարկումներ, ուսումնական պրոցեսում կարևոր է վերլուծություններ կատարել և առաջացած խնդիրները քննարկել հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականի և հոգեբանի մասնակցությամբ: Նշվեց անհատական աշխատանքի կարևորության մասին: Զեկուցողը ներկայացրեց նաև նախորդող ժամանակահատվածում ԿԱԽԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվում են սահմանված պահանջներին համապատասխան: Հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները, շեշտեց, որ ըստ սահմանված կարգի երկու ամիսը մեկ անգամ իրականացվում են քննարկումներ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչներին, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների մասնակցությամբ, որին մասնակցում է նաև ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է և շատ կարևոր հաշվի առնել երեխաների տարիքային փոփոխությունները, քանի որ վարքի փոփոխությունները ևս պայմանավորված են ավելի շատ տարիքային առանձնահատկություններով, կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը: Արտահայտվողները կարևորեցին ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԿԱԽԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 6. Մանկավարժական զեկուցում՝ «Տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական վարպետություն» թեմայով:

(զեկուցող՝ Ա. Հարությունյան)

Արմինե Հարությունյանն իր զեկույցում ներկայացրեց, որ հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը: Նշված նպատակների արդյունավետ իրականացման գործընթացում կարևոր է տարրական դպրոցի ուսուցիչը, ում մասնագիտական պատրաստությամբ, կոմպետենտությամբ և աշխատանքի որակով է նաև պայմանավորված մեր հասարակության առաջընթացը: Տարրական դպրոցի ուսուցիչը միաժամանակ պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման, նրա սոցիալականացման, կրթության շարունակության ապահովման համար: Հենց այս նկատառումներով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Արտահայտվեցին՝ Կ. Պողոսյանը

Պողոսյանն ասաց, որ զեկույցը շատ արդիական էր: Առանձնացրեց տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական կարողությունների բաղադրիչները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական վարպետություն» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«25» դեկտեմբերի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները:

Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. Տարրական դասարանների մեթոդմիավորման 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխություն և հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. I կիսայակի օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ընդունում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
9. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
10. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
11. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց նախորդ տարվա փորձը, ներկայացրեց տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից: Սերգեյ Ավանեսյանը նշեց արդյունքների քննարկման անհրաժեշտության ու վերլուծության կարևորություն մասին, կարևորեց աշակերտների կողմից ինքնուրույն աշխատելու փորձը և ուսուցիչների կողմից գրավորների ստուգման մեթոդները, քանի որ անկողմնակալ մոտեցումը թույլ է տալիս պարզել եղած դժվարություններն ու խնդիրները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների համար որդեգրված սկզբունքը, շեշտեցին, որ դրանով ապահովվում է օբեկտիվություն, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում աշակերտներին նախապատրաստել, սովորեցնել նմանատիպ աշխատանքներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում գրավոր աշխատանքները տրվել են հաստատված քանակին և տեսակին համապատասխան: Հավելեց, որ տրված գրավոր աշխատանքները պետք է համապատասխանեն ուսուցիչների կողմից կատարված գրանցումներին և տրված թեմատիկ, գործնական աշխատանքների քանակին, ինչպես նաև կարևորվեց ՕԹՊ-ների կատարողականը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքներ հանձնարարելիս պետք է ուշադրություն դարձնել չափորոշչային պահանջներին, կարևորեց, որ թեմատիկ ու գործնական աշխատանքները տրված լինեն ըստ ժամաքանակի և տեսակի, հավելեց, որ 2023-2024 ուսումնական տարվանից սկսած մեթոդական միավորումներում հաստատվում են թեմագիկ գրավոր աշխատանքների և գործնական աշխատանքների տեսակներն ու քանակները, որոնց համապատասխան ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչները պետք է իրականացնեն այդ աշխատանքները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման

նախագահի կողմից կատարել ստուգումներ թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված:

Լսեցին 5. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների մասին ինֆորմացիան:

Արտահայտվեցին՝ Կ. Պողոսյանը, Գ. Ավագյանը, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները կարևորեցին դասապրոցեսի ընթացքում ճիշտ մեթոդների և հնարների կիրառումը, նշվեց, որ դրանք պետք է լինեն նպատակային, տեղին և ներգրավեն բոլոր աշակերտներին: Կարևորվեց դասալսումների ընթացքում համագործակցային մոտեցումներ իրականացնելու անհրաժեշտությունը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվանից սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները: Ավանեսյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը համապատասխանում է կարգի պահանջներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները և շարունակել դասալսումներն իրականացնել արձանագրության ձևանմուշով (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 6. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում երկարօրյա ուսուցման խմբակ է կազմակերպվել 2-րդ, 5-րդ դասարանների 22 աշակերտի համար: Երկարօրյա ուսուցման խմբակներում աշակերտների ընդգրկման համար հիմք են հանդիսացել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, որտեղ սահմանված է, որ 2-րդ դասարաններից ընդգրկվում են այն աշակերտները, որոնք ունեցել են առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ, իսկ 5-րդ և 7-րդ դասարաններից այն աշակերտները, որոնք երկու անգամ անընդմեջ ունեցել են 1-3 գնահատական: Զեկուցողը հավելեց, որ իր և ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի կողմից պարբերաբար իրականացվել են ընթացիկ դիտարկումներ և իրականացված աշխատանքները գոհացուցիչ են:

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները

Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, անդրադարձան իրականացման ընթացքում առաջացած խնդիրներին, ձեռքբերումներին ու արդյունքներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 7. Տարրական դասարանների մեթոդմիավորման 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ 2-րդ կիսամյակում Տարրական դասարանների մեթոդմիավորումում ժամաբաժանման փոփոխություն նախատեսված չէ և 2-րդ կիսամյակի ընթացքում ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ժամաքանակները մնում են անփոփոխ:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավաանեսյանը նշեց, որ նախնական դասաբաշխումը կատարելու ժամանակ, ինչպես նաև 2023-2024 ուսումնական տարվա մեկնարկին ևս քննարկվել է փոփոխությունների մասին հարցը: Նշվել են բոլոր այն փոփոխությունները, որոնք սահմանված են օրինակելի ուսումնական պլանով և այդպիսով կատարվել է սահմանված պահանջը, միևնույն ժամանակ շեշտեց, որ 1-4-րդ դասարաններում փոփոխություններ նախատեսված չեն եղել և այժմ չեն կատարվում:

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 8. I կիսայակի օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ընդունման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար սահմանված կարգով, էլեկտրոնային տարբերակով դասվարները ներկայացրել են իրենց օրվա դասի պլանները, շեշտեց, որ որոշ դասվարներ ներկայացրել են ամբողջ ուսումնական տարվա դասի պլանները, որոնք իր կողմից ստուգվել են և էլեկտրոնային տարբերակով պահվում են ուսումնական մասում: Զեկուցողը նշեց նաև, որ 2-րդ դասարանի ՕԴՊ-ները գրվում են նոր ՀՊՉ-ների պահանջներին համապատասխան:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Գ. Ավագյանը

Արտահայտվողները նշեցին, որ այս սկզբունքով աշխատում են 2022-2023 ուսունական տարվանից սկսած, շեշտեցին որ էլեկտրոնային տարբերակով աշխատելը ավելի հեշտ է ու հարմար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն I կիսայակի օրվա դասի պլանների էլեկտրոնային տարբերակի ընդունման մասին զեկուցումը:

Լսեցին 9. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում էլեկտրոնային մատյանում արձանագրված թերությունները, նշեց, որ արձանագրվել են շեղումներ օրացուցային-թեմատիկ պլաններից, ինչպես նաև նկատվել են դեպքեր, երբ թեմատիկ գրավոր աշխատանքների փոխանցված գնահատականների մի մասը չի պահպանվել, ինչի պատճառով ուսուցիչը ստիպված է եղել գնահատականները փոխանցել այլ օրվա վրա: Զեկուցողը շեշտեց, որ նման խնդիրներ հաճախակի են հանդիպում էլեկտրոնային մատենավարության դեպքում, հավելեց, որ նախորդ ուսումնական տարի ընթացքում այդ և կամ նմանատիպ խնդիրներ նույնպես եղել են: Համակարգի մարզի պատասխանատուի հետ քննարկման արդյունքում պարզվել է, որ այն դեպքում, երբ ինտերնետ հասանելիությունը բավարար չի լինում, իրականացված աշխատանքները կարող են չպահպանվել: Զեկուցողը նշեց, որ այդ դեպքերում ավելի նպատակահարմար է մատենավարությունն իրականացնել այն ժամանակ, երբ ինտերնետ հասանելիության խնդիր չկա:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը

Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները՝ կապված մատենավարության հետ, հորդորեց

լինել առավել ուշադիր, չշեղվել ՕԹՊ-ներից, լինել հետևողական՝ աշխատանքը կատարելուց հետո կրկին ստուգել մատյանը, իսկ խնդիրների դեպքում համագործակցել մ/մ նախագահի, ուսումնական մասի ղեկավարի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև օպերատորների հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման ամփոփման մասին ինֆորմացիան և հայտարարել նախազգուշացում մեթոդմիավորման այն անդամներին, որոնք մատենավարության ընթացքում թույլ են տվել բացթողումներ:

Լսեցին 10. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱԽԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին համապատասխան: Հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները, շեշտեց, որ ըստ սահմանված կարգի երկու ամիսը մեկ անգամ իրականացվում են քննարկումներ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչներին, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների մասնակցությամբ, որին մասնակցում է նաև ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը, ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱԽԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 11. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդող ժամանակահատվածում իր, տնօրենի, մեթոդմիավորման նախագահի, դասարանների դասղեկների և մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ, դասերի դիտարկումներ, որոնց ընթացքում արձանագրվել է, որ 2-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, մատենավարությունը կազմակերպված էր օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ օրվա դասի պլանների մեջ ըստ պահանջի սահմանված էին տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը, ՀՊՉ համապատասխան կոդերը, խաչվող հասկացությունները: Օրվա դասի պլանի գործընթացի քայլերում սահմանված էին այն քայլերը, որոնց համաձայն իրականացվում է դասապրոցեսը: Հստակ նշված էին ռեսուրսներն ու մեթոդները: Միևնույն ժամանակ զեկուցողը նշեց, որ որոշակի խնդիրներ նկատվեցին առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հետ կապված հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը մեջ է և հնարավոր չի լինում բոլոր աշակերտների մոտ հավասարաչափ իրականացնել կարողությունների զարգացում:

Աշակերտների մեծ թվաքանակի հետ կապված նաև ուսուցիչները դժվարանում են բոլոր աշակերտներին հավասարապես ներառել դասապրոցեսին, ավելի շատ ուշադրություն դարձնել նրանց կողմից ինքնուրույն աշխատանքների իրականացմանը: Զեկուցողը նշեց, որ քանի որ օրվա դասի պլանի մեջ հստակ սահմանված է տվյալ օրվա թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել, թե դասի ավարտին ինչ վերջնարդյունքներ պետք է ապահովեն, ինչն ուսուցիչների մոտ հաջողվում է, եթե դասարանում աշակերտների խտությունը մեծ չէ:

Զեկուցողը, ինչպես նախորդիվ, այս անգամ նույնպես բոլորի ուշադրությունը հրավիրեց գնահատման հետ կապված հարցերին, նշեց, որ հիմնականում բացթողում է նկատում գնահատման դեպքում: Նախորդ քննարկումներից հետո նկատելի է, որ ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին, կատարում ես սահմանված պահանջները, սակայն խնդիրներ շարունակում են լինել հիմնականում գործիքակազմ հետ կապված:

Զեկուցողն առաջարկեց շարունակել ուշադրության կենտրոնում պահել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգին վերաբերող հարցերը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ անհրաժեշտ են համարում լրացուցիչ դասընթացների՝ նոր ՀՊՉ-ներով ուսուցումն ավելի լիարժեք իրականացնելու նպատակով:

Որոշեցին՝ ՄՄ նիստերի ընթացքում իրականացնել քննարկումներ առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգի շուրջ և արդյունքները քննարկել 2 ամիս անց:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«26» հունվարի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները :

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Էլեկտրոնոյին մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Օրացուցային-թեմատիկ պլանների փոփոխությունները, թերություններն ու խնդիրները:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. Օրվա դասի պլանների ներկայացման, թերությունների ու խնդիրների մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. ԱՈՒՊ-ներ, դիտարկման թերթիկներ:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա «Տարրական դասարանների մեթոդմիավորման» 6-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի

արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց նոր չափորոշիչների ներդրման ընթացքում նախորդող ժամանակահատվածում ի հայտ եկած խնդիրները, նշեց, որ որոշման համաձայն վերահսկողության արդյունքները պետք է քննարկվեն 2 ամիսը մեկ անգամ, միևնույն ժամանակ հավելեց. Քանի որ ընթացքում ուսուցիչների մոտ հարցեր են առաջանում, ապա անհրաժեշտ է համարում այս նիստի ընթացքում նույնպես քննարկել նոր ՀՊՉ-ների ներդրման հետ կապված հարցերը և ընդունել որոշումներ՝ հետագա աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար: Զեկուցողը նաև կարևորեց 2-րդ դասարաններում կատարված դասալսումների և քննարկումների արդյունքում բարձրաձայնվող հարցերի շուրջ տրվող պարզաբանումները: Զեկուցողն առաջարկեց հաջորդող ժամանակահատվածում դպրոցի ուսուցիչների համար իրականացնել վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում իր և «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի Հերմինե Ալավերդյանի կողմից, որը նաև Գորիսի պետական համալսարանի վերպատրաստողներից է, քներկայացվեն գնահատման նոր համակարգը, կարողունակությունները, աշակերտների ներգրավվածության հետ կապված հարցերը, դասի ճիշտ պլանավորումն ու փաստաթղթավարությունը:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը

Ռիտա Շալունցը նշեց, որ նոր չափորոշչային դասարաններում խնդիրներ կան հիմնականում գնահատման նոր սկզբունքների հետ կապված: Այս հարցի շուրջ բավականին արդյունավետ համարեց ուսումնական մասի ղեկավար՝ Սերգեյ Ավանեսյանի կողմից տրվող խորհրդատվությունները և կազմակերպվող քննարկումները:

Շալունցը նշեց, որ որպես ԿԶՆԱԿ-ի մենթոր վերապատրաստող ուսուցիչ, նոյեբերի 30-ին և դեկտեմբերի 1-ին երկօրյա դասընթաց էր կազմակերպվել Գորիս համայնքի 2-րդ դասարանում դասավանդող դասվարների համար «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների վերջնարդյունքների ապահովվման վերաբերյալ, որին մասնակցել են նաև Նունե Գալստյանը, Անուշ Աղաբեկյանը և Կարինե Մալխասյանը:

2-րդ դասարանների դասվարներ՝ Նունե Գալստյանը, Անուշ Աղաբեկյանը և Կարինե Մալխասյանը դասընթացի վերաբերյալ իրենց տպավորություններով կիսվեցին և ասացին, որ բոլոր հարցերը քննարկվել են և ստացել են սպառիչ պատասխաններ:

Որոշեցին՝ 1. Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության հետ կապված զեկուցումը:

2. Կազմակերպել վերապատրաստման դասընթաց դպրոցի ուսուցիչների և ուսուցիչների համար ներկայացնելով գնահատման համակարգը, կարողութնակությունները, աշակերտների ներգրավվածությունն ու փաստաթղթավարությունը:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների կողմից կատարված աշխատանքները մատենավարության հետ կապված: Հետևողական վերահսկողության արդյունքում հումանիտար առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների մոտ կտրուկ նվազել են թերությունները:

Արտահայտվեցին՝ Տ. Փարսադանյանը, Ա. Հարությունյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հետևողական աշխատանքները օգնում են ուսուցիչներին բարելավել իրենց կարողությունները էլեկտրոնային մատենավարության հարցում:

Տ. Փարսադանյանը կարևորեց ամենօրյա գրանցումների կատարումը, քանի որ այս դեպքում նվազում է անճշտություններ թույլ տալու հավանականությունը, ինչպես նաև նշեց, որ ՕԹՊ-ներն ու ՕԴՊ-ները շատ են օգնում և՛ մատենավարության ժամանակ, և՛ դասի կազմակերպման ընթացքում, քանի որ հստակ նշված է, թե որ օրն ինչ դաս պետք է ներկայացնեն, նպատակները, վերջնարդյունքները և այլն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը, շարունակել վերահսկողությունը:

Լսեցին 5 . Օրացուցային-թեմատիկ պլանների փոփոխությունները, թերություններն ու խնդիրները:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ուսուցիչների կողմից կազմված և հաստատված օրացուցային-թեմատիկ պլաններում կատարվել են որոշակի փոփոխություններ, մասնավորապես, որոշ դեպքերում փոխվել են թեմատիկ գրավոր աշխատանքների օրերը, ինչի արդյունքում փոփոխություն է կատարվել թեմատիկ հաջորդականության մեջ: Զեկուցողը նշեց նաև, որ օրացուցային-թեմատիկ պլաններում ի հայտ են եկել որոշակի տեխնիկական թերություններ, որոնք պետք է հաշվի առնել և հաջորդ ուսումնական տարվա ընթացքում փոփոխություն կատարել այդ օրացուցային-թեմատիկ պլանների մեջ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Սերգեյ Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ մեթոդմիավորման նախագահին, ուսումնական գծով փոխտնօրենի կողմից արված բոլոր դիտարկումները հաշվի են առել, ընդունել ի գիտություն և հաջորդ ուսումնական տարվա մեկնարկին այդ բոլոր դիտարկումները հաշվի կառնվեն:

Սերգեյ Ավանեսյանը նշեց. «Որպես ուսումնական գծով փոխտնօրեն խորհրդատվություններ ստանալու նպատակով մշտապես կապի մեջ եմ ԿԶՆԱԿ հիմնադրամի համապատասխան աշխատակիցների հետ: Այդ խորհրդատվությունների ընթացքում հանդես եմ եկել առաջարկությամբ, որը կապված է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների և հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի անհամապատասխանության հետ, ինչը կապված է երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի հետ, ինչպես նաև պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 4-րդ գլխի 24-րդ կետի «դասի» բառի հեռացման հետ, որը շփոթություն է առաջացնում գնահատման համակարգի նոր սկզբունքների հետ կապված:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն օրացուցային-թեմատիկ պլանների փոփոխությունների, թերությունների ու խնդիրների մասին զեկուցումները:

Լսեցին 6. Օրվա դասի պլանների ներկայացման, թերությունների ու խնդիրների մասին:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ դժվար է իրականացվում 2-րդ դասարաններում օրվա դասի պլանների պատշաճ լրացումը, հավելելով, որ այդ դժվարությունները հիմնականում կապված են նոր չափորոշիչով գնահատման համակարգի հետ, շեշտեց, որ նրանց մոտ այնքան էլ ճիշտ չի ձևավորվել խաչվող հասկացություններ գաղափարը: Զեկուցողը նշեց նաև, որ օրվա դասի պլաններում բացթողումներ թույլ տված ուսուցիչների հետ իրականացվել է անհատական քննարկում, ինչի արդյունքում նրանք ստացել են պարզաբանումներ, իսկ նշված թեմայով վերապատրաստում իրականացնելու որոշումը ավելի կխորացնի ու կհիմնավորի նրանց ձեռք բերած գիտելիքները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ իրենց կարծիքով ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացված վերապատրաստումների ժամանակ ամբողջական ու հանգամանալից չեն ներկայացվել խաչվող հասկացությունների վերաբերյալ նյութը, ինչի արդյունքում էլ ի հայտ են եկել այդ բացթողումները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն օրվա դասի պլանների ներկայացման, թերությունների ու խնդիրների մասին զեկուցումը:

Լսեցին 7. ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, ինչպես նաև դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին համապատասխան:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը, ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին զեկուցումը:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

«28» փետրվարի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե

Նիստին ներկա էր տնօրեն Դավիթ Կոստանդյանը, ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստում՝ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից 3-4-րդ դասարաններում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Արտահայտվեցին՝ Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:
Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատյաններում արձանագրված բացթողումները, կարևորեց էլեկտրոնային մատենավարության ստուգման ընթացքն ու լրացման կանոնների պահպանմանը: Շեշտեց, որ մատենավարությունն անհրաժեշտ է կազմակերպել օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններն իսկապես շատ են օգնում պատշաճ մատենավարության իրականացմանը, ինչի մասին բազմիցս նշվել է: Դրա համար լրացուցիչ, ևս մեկ օգնող գործիք է օրվա դասի պլանը, որում հատկապես նոր ՀՊՉ-ներով ուսուցման համար առկա են մի շարք հուշող կետեր:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար:

Լսեցին 4. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցող նշեց, որ փետրվարի 12-ից մինչև մարտի 4-ը 2-րդ դասարաններում իրականացրել են դասալսում-դիտարկումներ «Առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացումը», «Թեմայի վերջնարդյունքների զարգացումը», «Ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացումը», «Գնահատում» թեմաներով և հաշվի է առնվել դասալսումների իրականացման կարևորությունը և դրա հետևանքում ձեռքբերումների և խնդիրներ, բացթողումների բացահայտման կարևորությունն ու կատարված աշխատանքները:

Զեկուցողը նշեց որ 2-րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչները դասի ընթացքում կիրառել են հանրակրթության պետական նոր չափորոշչի հիմքում ընկած 8 առանցքային կարողություններից առնվազն չորսը, որոնք համապատասխանում էին տվյալ առարկաներին: Ուսուցիչները դասի ընթացքում օգտագործում էին արդի հնար-մեթոդներ, դիդակտիկ նյութեր, խաղեր, ինչը դասը ավելի հետաքրքիր ու գրավիչ էր դարձնում: Նպաստում էին սովորողի ինքնաճանաչմանը և ինքնաարտահայտմանը, ազատ անհատականության կայացմանը, մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, քննադատական, վերլուծական և ստեղծագործական մտածողության, գեղագիտական ճաշակի զարգացմանը: Ինչպես նաև սովորողների ֆիզիկական շարժողական ակտիվության ապահովմանը, արագաշարժության, ճկունության, առողջությանը նպաստող վարքագծի, սեփական անձի և մյուսների ֆիզիկական և հոգեկան առողջությանը միտված պատասխանատու վարքագծի ձևավորմանը, անվտանգ կենսակերպին, համակողմանի զարգացած և ներդաշնակ, սեփական ուժերի հանդեպ վստահություն ունեցող, նախաձեռնողական և մի շարք այլ բարոյակամային դրական հատկանիշներ ունեցող անձի ձևավորմանը:

Շալունցը նշեց, որ դասալսուներ է կատարել բոլոր 2-րդ դասարաններում, «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը», «Տեխնոլոգիա» առարկաներից և ընդհանուր առմաբ գոհ է արդյունքներից: Բոլոր

դասարանները հագեցած են դիդակտիկ նյութերով և պաստառներով: Ուսուցիչներն ուսումնական պրոցեսում կիրառում էին տարաբնույթ հնար-մեթոդներ, խաղեր: Շալունցը խնդիր է համարում մեծաթիվ աշակերտներով դասարանները, որտեղ որքան էլ ուսուցիչը հմտորեն փորձում է դասին ներգրավել բոլոր աշակերտներին, սակայն ժամանակի սղությունը միշտ առկա է: Ուսուցիչները դասի ընթացքում հանգում են մեծաթիվ վերջնարդյունքների, 2-4 կարողունակություններ ապահովվում են: Գնահատման տարբեր եղանակներ են կիրառվում: Թեմայի մուտքը կատարվում է հայտորոշիչ թեստերի օգնությամբ: Աշակերտները հմտորեն կատարում են ինքնագնահատում, փոխադարձ գնահատում:

Խմբային և անհատական աշխատանքներում աշակերտերը կարողանում են ինքնուրույն հասկանալ առաջադրանքը և կատարել այն:

Արտահայտվեցին՝ Դ. Կոստանդյանը, Ս. Ավանեսյանը, Ն. Գալստյանը, Ա. Աղաբեկյանը, Կ. Մալխասյանը

Գալստյանը նշեց, որ հատկապես դժվար է այն պարագայում, երբ դասարանում թույլ կարողություններով, ԿԱՊԿՈՒ աշակերտներ կան:

Աղաբեկյանն իր ելույթում շնորհակալական խոսք հղեց փոխտնօրեն Ավանեսյանին և մենթոր Շալունցին, ասելով, որ նրանց սրտացավ աշխատանքի և մշտապես վերապատրաստումներ, սեմինար-քննարկումներ կազմակերպելու արդյունքում են ուսուցիչները նոր չափորոշիչներին այսքան սահուն անցում կատարել:

Մալխասյանն իր ելույթում ասաց, որ գրքերը կազմված են բավական մտածված և շատ ուղորդող են դասի ողջ ընթացքը ճիշտ և հագեցած կազմակերպելու համար:

Դավիթ Կոստանդյանը կարևորեց ուսուցիչների տեղեկացվածությունը՝ կապված նոր ՀՊՉ-ների ներդրման հետ և հատկապես գնահատման հարցի շուրջ եղած խնդիրների հետ: Նշեց և կարևորվեց նաև կազմակերպվող վերապատրաստումներին (նոր ՀՊՉ-ներ, գնահատում) դպրոցի ուսուցիչների կողմից ակտիվ մասնակցությունը: Դավիթ Կոստանդյանը նշեց նաև ՏՀՏ-ների կիրառման անհրաժեշտության մասին: Հետաքրքիր և գործնականում հագեցած դասապրոցես ապահովելու համար անհրաժեշտ համարեց նաև դիտակտիկ պարագաների ապահովումը և կիրառումը: Կարծիք հայտնեց, որ այս հարցը կարելի է լուծել նաև, եթե ուսուցիչները տիրապետում են նոր տեղեկատվական տեխնոլոգիաներին և կիրառում են դասաժամերի ընթացքում, հավելելով՝ դպրոցն իր կողմից ամեն ինչ անում է, ՏՀՏ-ներ ապահովելու համար:

Սերգեյ Ավանեսյանը նշեց. «2023-2024 ուսումնական տարվա հոկտեմբեր ամսվա նիստերի ընթացքում բոլոր մեթոդական միավորումներում որոշում է կայացվել, որ առանձնակի ուշադրություն պետք է դրաձնել 2-րդ դասարաններում նոր ՀՊՉ-ների կիրառմանը, ի հայտ եկած բացթողումները, խնդիրները երկու ամիսը մեկ անգամ պարտադիր քննարկել մեթոդմիավորումների նիստերում, հստակ նշել, թե ինչ գործողություններ պետք է կատարել այդ բացթողումների, խնդիրների վերացման ուղղությամբ: Այդ նպատակով նախորդ նիստերից մեկի ընթացքում որոշում է կայացվել, որ դպրոցում պետք է իրականացվի վերապատրաստման դասընթաց: Երկօրյա վերապատրաստումների ընթացքում անդրադարձ է կատարվել 2-րդ դասարաններում առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացմանը, թեմայի վերջնարդյունքների զարգացմանը, աշակերտների ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացմանը, դպրոցում սովորողների գնահատման չափանիշներին: Դասընթացը վարել եմ ես և «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի, Գորիսի պետական համալսարանի Ընդհանուր մանկավարժության և հատուկ կրթության ամբիոնի դասախոս Հերմինե Ալավերդյանը: Դասընթացից հետո իրականացված դասալսումների, դիտարկումների արդյունքում պարզ է դարձել, որ

ուսուցիչների մոտ քննարկված թեմաներից առկա է առաջընթաց: Այդուհանդերձ դպրոցը խնդրանքով դիմել է ԿԶՆԱԿ հիմնադրամին, միայն դպրոցի աշխատակիցների համար հանդիպում կազմակերպելու և դրա ընթացքում ուսուցիչների մոտ առաջացած հարցերը քննարկելու համար: Ուսուցիչների հետ քննարկման արդյունքում պատրաստել եմ հարցաշար, որտեղ նշվել են այն բոլոր թեմաները, որոնց ուղղությամբ ուսուցիչները ցանկանում եմ իրականացնել քննարումներ ԿԶՆԱԿ-ի ներկայացուցիչների հետ:

Նախորդող ժամանակահատվածում բոլոր ուսուցիչների մոտ իրականացվել են դասալսումներ, որոնց ինտենսիվությունը մի փոքր ավելին էր, քան սահմանված է դպրոցի համապատասխան որոշումներով: Առանձնակի ուշադրություն է դարձվել 2-րդ դասարաններում դասալսումների իրականացմանը: Իրականացված բոլոր դասալսումներից հետո պարտադիր իրականացվել են քննարկումներ դասալսվողի և դասալսողի կամ դասալսողների մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվել են դասերը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ աշակերտների ներգրավվածության և ինքնուրույն աշխատանքի խրախուսման հետ կապված խնդիրները կապված են նաև դասարաններում աշակերտների մեծ թվաքանակի հետ, ինչը հնարավորություն չի տալիս 45 րոպեի ընթաքցում բոլոր աշակերտներին հավասարաչափ ներառել ուսումնական գործընթացում»:

Որոշեցին՝ 1. ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության արդյունքներն ընդունել ի գիտություն:

2. ԿԶՆԱԿ հիմնադրամի ներկայացուցիչների հետ հանդիպումից հետո նույնպես շարունակել իրականացնել դիտարկումներ 2-րդ դասարաններում, դրանց արդյունքները սահմանված որոշման համաձայն երկու ամիսը մեկ անգամ քննարկել մեթոդմիավորման նիստում:

3. Հաշվի առնելով երկամսյա դիտարկումների արդյունքները, ըստ անհրաժեշտության կազմակերպել կոնկրետ թեմաների հետ կապված վերապատրաստման դասընթաց:

4. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության պատասխանատու նշանակել Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունցին:

Լսեցին 5. «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից 3-4-րդ դասարաններում տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ ինչպես 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթաքում, երկրորդ կիսամյակի համար էլ տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները տալ թեստային տարբերակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հետևել եռամակարդակ թեստեր կամ աշխատանքներ կազմելու սկզբունքին, առաջարկեցին ինչպես առաջին կիսամյակի ընթացքում, 2-րդ դասարանում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանք չտալ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դասարաններում ուսուցումն իրականացվում է նոր հանրակրթության պետական չափորոշչով և արդեն իսկ գնահատման հայտորոշիչ, ձևավորող և բնութագրիչ եղանակներով ստուգվում են աշակերտների գիտելիքները, իսկ 3-4-րդ դասարանների համար կազմել ընտրովի առաջադրանքներով աշխատանքներ՝ թեստեր՝ 4 տարբերակներով:

Որոշեցին՝ 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում 2-րդ դասարաններում տնօրենության գրավոր աշխատանք չտալ, իսկ 3-4-րդ դասարաններում՝ թեստային աշխատանք՝ 4 տարբերակով:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

«27» մարտի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Փոխադարձ դասալսումների կազմակերպում: Դասերի դիտարկում, լավագույն փորձի տարածում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Քննական թեստերի հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. Թեմատիկ գրավոր աշխատանքների կատարողականի ստուգում, օրացուցային-թեմատիկ պլանների փոփոխություն:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Արտահայտվեցին՝ Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:
Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի

արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատյաններում արձանագրված բացթողումները, կարևորեց էլեկտրոնային մատենավարության ստուգման ընթացքն ու լրացման կանոնների պահպանմանը: Շեշտեց, որ մատենավարությունն անհրաժեշտ է կազմակերպել օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններն իսկապես շատ են օգնում պատշաճ մատենավարության իրականացմանը, ինչի մասին բազմիցս նշվել է, և հորդորեց բոլոր ուսուցիչների աշխատել հիմք ընդունելով ՕԹՊ-ներն ու առաջնորդվել բացառապես թեմատիկ հաջորդականությամբ:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար:

Լսեցին 4. Փոխադարձ դասալսումների կազմակերպման և դասերի դիտարկման, լավագույն փորձի տարածման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ փոխադարձ դասալսումների դերը շատ կարևոր է ուսուցիչների միջև համագործակցային մթնոլորտի ձևավորման համար: Կարևորվեց այն հանգամանքը, որ դասալսումները նպաստում են փորձի փոխանակմանը, բացերի բացահայտմանը և շտկմանը:

Զեկուցողը ներկայացրեց քննարկումների կարևորությունը և անհրաժեշտ համարեց յուրաքանչյուր դասալսումից հետո իրականացնել քննարկումներ, ինչը կօգնի ուսուցիչներին միջոցներ ձեռնարկել դասի արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների ինքնուրույն կարողությունների և հմտությունների զարգացումը ապահովելու համար: Հիշեցրեց, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել նոր ՀՊՉ-ների ներդրման գործնական գործընթացին և շարունակել 2-րդ դասարաններում դասալսումների կազմակերպման և քննարկման ընթացքում նկատված հարցերի ու խնդիրների շուրջ կազմակերպվող քննարկումներին:

Շալունցը նշեց, որ նախորդող ժամանակահատվածում իրականացված դասալսումների արդյունքներով դասերն անց են կացվել համագործակցային և արդի մեթոդների կիրառմամբ, կատարվել են բազմաբովանդակ աշխատանքներ՝ խմբային, անհատական, որտեղ ակնհայտ էր սովորողների համագործակցելու, քննադատելու, հանդուրժողականության կարողություններն ու հմտությունները:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Ավանեսյանը նշեց, որ Անուշ Աղաբեկյանի մոտ իրականացրած դասալսումները փաստում են, որ վաստակաշատ ուսուցչուհու դասերը կազմակերպված էին բարձր մակարդակով և առաջավոր փորձի դասեր էին, հորդորեց հաճախակի կատարել դասալսումներ և ծանոթանալ առաջավոր փորձի դասերին: Շեշտվեց, որ կատարված վերլուծությունները, քննարկումները և դիտարկումները արդյունավետ էին այնքանով, որ հաջորդ

դասալսումների ժամանակ նկատված վրիպումներն ու թերությունները մեծամասամբ ուղղված էին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դասալսումների, փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը:

Լսեցին 5. Քննական թեստերի հետ կապված հարցերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց, որ ժամանակին մեկնարկեն 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման թեստերի կազմման աշխատանքները, որոնք պետք է լինեն չափորոշչային պահանջներին ու ԳԹԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան: Զեկուցողը նշեց նաև, որ առաջիկայում հաստատվելու են քննական թեստերը:

Արտահայտվեցին՝ Ա. Հարությունյանը

Հարությունյանը նշեց, որ անհրաժեշտ է բավարար ժամանակ հատկացնել տարեվերջյան կրկնություններին և թեմաների ամփոփումներին, ինչը կնպաստի ավարտական քննությունները սահմանված կարգով, պատշաճ մակարդակով անցկացնելուն:

Որոշեցին՝ Կազմել ավարտական քննական թեստերը, հավանության արժանացնել ՄՄ նիստում և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 6. Թեմատիկ գրավոր աշխատանքների կատարողականի ստուգման, օրացուցային-թեմատիկ պլանների փոփոխության մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում՝ մինչև մարտի 27-ն ընկած ժամանակահատվածը տրված թեմատիկ գրավոր աշխատանքների քանակի, պետական ծրագրով ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված աշխատանքները: Զեկուցողը նշեց, որ և՛ առաջին կիսամյակի ընթացքում, և՛ երկրորդ կիսամյակի ընթացքում թեմատիկ գրավոր աշխատանքները տրվել են ըստ նախապես կազմված թեստերի և ըստ նախապես հաստատված ժամանակացույցի ու քանակի: Նշեց նաև, որ որոշ ուսուցիչներ որոշ դասարաններում կատարել են թեմատիկ գրավոր աշխատանքի օրերի փոփոխություն, ինչը կապված է նաև emis.am համակարգի ոչ պատշաճ աշխատանքի հետ: Փոփոխությունը սահմանված կարգով քննարկվել է մեթոդմիավորման նիստում, օրացուցային-թեմատիկ պլաններում կատարվել է թեմատիկ հաջորդականության փոփոխություն:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Միքայելյանը

Ալինա Միքայելյանը նշեց, որ առաջին կիսայակում իր մոտ է էլեկտրոնային մատյանի խափանման պատճառով նման խնդիր առաջացել, որի պատճառով ՕԹՊ-ում կատարվել է թեմատիկ գրավոր աշխատանքի օրի փոփոխություն:

Արտահայտվողները կարևորեցին ՕԹՊ-ների և ՕԴՊ-ների ճիշտ կազմումը, դրանց կիրառության հետևելը, որը թույլ է տալիս գրավոր և գործնական աշխատանքների քանակը պահպանել և ժամանակի բաժանման հարցում գործել մեթոդմիավորման որոշումներին և առարկայական ծրագրերին համապատասխան:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն թեմատիկ գրավոր աշխատանքների կատարողականի ստուգման մասին զեկուցումը:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

«25» ապրիլի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացման մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. Գրաճանաչության ստուգում առաջին դասարաններում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» ապրիլ ամսվա միջոցառումները:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. Մանկավարժական զեկույց՝ «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում» թեմայով:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Արտահայտվեցին՝ Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:
Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատյաններում արձանագրված բացթողումները, կարևորեց էլեկտրոնային մատենավարության ստուգման ընթացքն ու լրացման կանոնների պահպանմանը: Շեշտեց, որ մատենավարությունն անհրաժեշտ է կազմակերպել օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններն իսկապես շատ են օգնում պատշաճ մատենավարության իրականացմանը, ինչի մասին բազմիցս նշվել է, և հորդորեց բոլոր ուսուցիչների աշխատել հիմք ընդունելով ՕԹՊ-ներն ու առաջնորդվել բացառապես թեմատիկ հաջորդականությամբ:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և ողջամիտ ժամանակահատված դրանք վերացնել:

Լսեցին 4. 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ 2-րդ դասարաններում կատարված դասալսումների արդյունքում և համատեղ քննարկումների շնորհիվ բազմաթիվ հարցերի պատասխաններ պարզ են դարձել ուսուցիչների համար: Մարտ-ապրիլ ամիսների ընթացքում ուսուցիչների կողմից կատարված աշխատանքների և կազմակերպված քննարկումների արդյունքում ունենք հստակ պատկերացում և կիրառում՝ գնահատման համակարգի հետ կապված: ՀՊՉ-ներին համապատասխան կազմված ՕԴՊ-ները թույլ են տալիս ուշադիր լինել նպատակների և վերջնարդյունքների հարցում, ինչպես նաև ճիշտ ժամանակին և սկզբունքով կիրառել հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատումները:

Զեկուցողը կարևորեց ուսումնական մասի ղեկավար Սերգեյ Ավանեսյանի կողմից տրվող խորհրդատվությունները, որոնք ևս նպաստեցին ՀՊՉ-ների հետ կապված դժվարությունների հաղթահարմանը, ինչպես նաև փետրվար ամսվա ընթացքում իրականացված վերապատրաստման դասընթացը, որը միտված էր մանկավարժների մոտ նոր ՀՊՉ-ների սկզբունքների համապատասխան գնահատման համակարգից չպարզաբանված հարցերի պատասխանների ներկայացմանը:

Շալունցը նշեց, որ նախորդող ժամանակահատվածում իրականացված դասալսումների արդյունքներով դասերն անց են կացվել համագործակցային և արդի մեթոդների կիրառմամբ, կատարվել են բազմաբովանդակ աշխատանքներ՝ խմբային, անհատական, որտեղ ակնհայտ էր սովորողների համագործակցելու, քննադատելու, հանդուրժողականության կարողություններն ու հմտությունները:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Ավանեսյանը ևս մեկ անգամ նշեց նոր ՀՊՉ-ի կարևորագույն պահանջները, որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել:
Անուշ Աղաբեկյանը, նշեց, որ ամենօրյա հետևողական աշխատանք է իրականացվում, որպեսզի ապահովեն ՀՊՉ-ի պահանջները:
Կարինե Մալխասյանն իր ելույթում ներկայացրեց գնահատման բոլոր երեք տեսակների հետ կապված խնդիրները և թե ինչպիսի աշխատանքներ են կատարվում, ինչ լուծումների են հանգում:
2-րդ դասարանների դասվարները և ՄՄ անդամներն աշխատանքներում կարևորագույն պայման են համարում դասարաններում համացանցի առկայության պարտադիր լինելը, քանի որ անհրաժեշտ տեսանյութերն ու ձայնագրությունները երեխաներին ներկայացնելու համար դա շատ կարևոր է:

Որոշեցին՝ Շարունակել քննարկումները, վերլուծությունները, փոխադարձ աջակցությունները ու համագործակցությունը:
Հաջորդ քննարկումն իրականացնել մայիս ամսվա հերթական նիստի ընթացքում, ամփոփել 2023-2024 ուսումնական տարվա արդյունքները:

Լսեցին 5. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ դասվարների և ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի հետ քննարկման արդյունքում նախընտրելի է համարվել թեստային առաջադրանքների տեսքով տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները: Գրավոր աշխատանքները համապատասխանացված են անցած թեմաների հետ և կազմված են թեստային աշխատանքների պահանջներին համապատասխան: Թեստերը կազմված են չորս տարբերակով: Գրավոր աշխատանքները սահմանված կարգով տրվել են և ամփոփվել են արդյունքները: Զեկուցողը հայտնեց նաև տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները, մասնավորապես, կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա, առաջարկեց ուշադրություն դարձնել ուղղագրության, կետադրության և խնդիրների համառոտագրության վրա:

Արտահայտվեցին՝ Ա. Հարությունյանը, Ս. Ավանեսյանը

Հարությունյանը նշեց, որ անհրաժեշտ է բավարար ժամանակ հատկացնել տարեվերջյան կրկնություններին և թեմաների ամփոփումներին, ինչը կնպաստի ավարտական գիտելիքների ստուգմանը սահմանված կարգով, պատշաճ մակարդակով անցկացնելուն:
Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում նախապատրաստական աշխատանքների արդյունքում կիրառել այնպիսի մեթոդներ ու հնարներ, որ ապահովվի անկողմնակալ վերաբերմունքը: Ավանեսյանը կարևոր համարեց աշակերտների հետ լրացուցիչ աշխատանքը, ինչպես նաև հիմք ընդունելով գրավոր աշխատանքների արդյունքները, դրանց հիման վրա ընթացիկ աշխատանքային պլանների մշակում՝ կրթության որակի բարելավման ուղղությամբ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 6. Առաջին դասարաններում գրաճանաչության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողն իր ելույթում ասաց, որ առաջին դասարան ընդունվել են 81աշակերտ, յուրաքանչյուր դասարանում 27- ական աշակերտ:
Ծրագրի համապատասխան կազմվել է թեմատիկ պլան և սահմանված ժամկետներում երեխաները յուրացրել են նախայբբենական և այբբենական

շրջանը: Ավարտելով այբբենական շրջանը առաջին դասարաններում բոլոր աշակերտները տառաճանաչ են, կարողանում են կարդալ և գրել:
Իհարկե կան աշակերտներ, ովքեր ունեն որոշակի բացեր, դժվարանում են հատկապես գրավոր աշխատանքներում: Զեկուցողը նշեց, որ նախորդող ժամանակահատվածում իրականացվել են դիտարկումներ բոլոր 3 առաջին դասարաններում և առանձնակի ուշադրություն է դարձվել աշակերտների գրաճանաչությանը, կարդալուն և գրելուն:

Արտահայտվեցին՝ Արուս Դոլունցը, Կարինե Պողոսյանը , Ռիտա Շալունցը

Դոլունցն ասաց, որ իր դասարանում կա երկու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, ովքեր այբուբենը լավ չեն յուրացրել և չեն ճանաչում կամ շփոթում են տառերը:
Պողոսյանն իր ելույթում նշեց, որ առաջին «Բ» դասարանում ևս կա տառերը չյուրացրած և ծրագրային պահանջների շեմը թերի յուրացրած մեկ աշակերտ:
Շալունցն ասաց, որ առաջին «Գ» դասարանում բոլոր աշակերտները հաղթահարել են գրաճանաչության դժվարությունները, կան աշակերտներ, ովքեր տառաճանաչ են, սակայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ են, ովքեր ունեն լեզվական խնդիրներ, որի պատճառով գրավոր խոսքում թույլ են տալիս սխալներ:

Որոշեցին՝ Առանձնահատուկ ուշադրություն դարձնել կրթության մեջ դժվարություններ ունեցող աշակերտներին և ուսուցչի օգնականներին ևս ընդգրկել դասապրոցեսին, որպեսզի տարեվերջին այդ աշակերտները լինեն տառաճանաչ:

Լսեցին 7. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» ապրիլ ամսվա միջոցառումների մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողն իր շնորհակալական խոսքն հայտնեց միամսյակին նվիրված միջոցառումների կազմակերպման համար: Նշեց, որ յուրաքնչուր դասարան յուրովի է կազմակերպել: Բոլոր դասարաններում դասղեկի ժամերին կազմակերպել են մայրերին գովերգելու և շնորհակալական խոսքեր շռայլելու դասեր: Առաջին դասարանում գրաճանաչ դարձած աշակերտներն առաջին անգամ իրենց մայրիկների համար գրել են շնորհավորական ու շնորհակալական խոսքեր և նվիրել մայրիկներին, տեխնոլոգիայի դասերին պատրասել են բացիկներ և ծաղկեփնջեր, որոնք երգ ու պարով և արտասանությամբ անակնկալ ձևով նվիրել են մայրիկներին:
Կարինե Մալխասյանն ապրիլի 4-ին կազմակերպել է միջոցառում՝ «Իմ հույսի ամրոց» խորագրով:

Արտահայտվեցին՝ Վարդ Գրիգորյանը, Նունե Գալստյանը

Գրիգորյանը նշեց, որ հիանալի դաս-միջոցառումներ էին՝ գեղեցիկ երաժշտական և պարային համարներով:
Գալստյանն ասաց, որ կազմակերպված միջոցառումները շատ բան են փոխում երեխաների վարքագծի մեջ, սկսում են ավելի շատ գնահատել մայրիկներին և նաև կարողանում են անկաշկանդ արտահայտել իրենց զգացմունքները:

Որոշեցին՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» ապրիլ ամսվա միջոցառումների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 8. Մանկավարժական զեկուցում՝ «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում»: թեմայով:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացնելով թեման՝ կարևորեց նրա դերը ժամանակակից դպրոցում: Գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացումներն ու դրան համապատասխան հասարակական պահանջարկը թելադրում է տնտեսության

բոլոր ճյուղերի վերակառուցում, որը հենված է օրեցօր փոփոխվող նոր տեխնոլոգիաների կիրառման վրա: Յուրաքանչյուր նորի ստեղծման անհրաժեշտություն միջնորդավորված ձևով ենթադրում է կրթության որակի բարձրացում, որի հիմքերը պետք է դրվեն բոլոր ուսումնական հաստատություններում, որտեղ գիտելիքների մտապահման ու վերարտադրման պահանջին զուգընթաց անհրաժեշտություն է առաջանում ուսումնառողների մեջ ձևավորել և զարգացնել ինքնուրույն մտածելու, կողմնորոշվելու և գործելու, ստեղծելու, վերաբերմունք, դիրքորոշում հայտնելու կարողություններ:

Այսպիսով, ավարտելով ավարտական հետազոտական աշխատանքը, եկել ենք հետևյալ եզրահանգումների.

- Մանկավարժական տեխնոլոգիան ներկայացվում է որպես ուսուցման և դաստիարակության գործընթացի տեսականորեն հիմնավորված մեթոդների ու միջոցների, գործողությունների համախումբ, որը թույլ է տալիս հաջողությամբ իրականացնել կրթական նպատակները:
- Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս իրականացնել կրտսեր դպրոցում ակտիվ, անձնային կողմորոշում ունեցող ուսուցում, որը նպաստում է հաղորդակցման և գիտակցական զարգացմանը:
- Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիայի նախագծման ժամանակ շատ կարևոր է ոչ այնքան ուսուցման գործընթացի ռեժիմն ու կարգապահությունը, որքան ուսումնառողների հետ դասավանդողի համատեղ ուսումնական մասնագիտական գործունեության մեթոդը:
- Տարրական դպրոցում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներով կազմակերպված դասերն ի զորու են բարձրացնել սովորելու մոտիվացիան, նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը, մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը:
- Տարրական դպրոցում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներով կազմակերպված դասերն ի զորու են բարելավել դասի անցկացման մեթոդները, ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները, պլանավորել և համակարգել դասվարի աշխատանքը, արագ և արդյունավետ պատրաստվել դասին:
- Տարրական դասարաններում մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնում է աշակերտների ներգրավվածությունը դասին և հնարավորություն է տալիս իրականացնել տարբերակված ուսուցում:

Արտահայտվեցին՝ Արուս Դոլունցը, Տաթևիկ Փարսադանյանը

Արտահայտվողները նշեցին, որ թեման շատ արդիական էր, հետաքրքիր և ուսուցողական: Նշեցին, որ ավելի հաճախ կկիրառեն ժամանակակից տեխնոլոգիաները դասապրոցեսում, ավելի լավ արդյունքներ ապահովելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10
ԱՐՏԱՀԵՐԹ

«10» մայիսի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման քննական տոմսերի, քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից ազատել:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. Մանկավարժական զեկույց՝ «Դաստիարակության մեթոդների կիրառումը տարրական դասարաններում» թեմայով:
(զեկուցող՝ Ա. Դոլունց)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Արտահայտվեցին՝ Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:
Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Գիտելիքների ստուգումը կազմակերպելու համար տնօրենի կողմից ներկայացուցիչներ նշանակել տնօրեն Դավիթ Կոստանդյանին, փոխտնօրեններ Սերգեյ Ավանեսյանին, Արմիդա Գևորգյանին, ԴԱԿ Արաքսիա Առստամյանին:

Հաստատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմերը (կցվում է):

Լսեցին 4. 4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման հարցատոմսերի քննարկման, հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ «Մայրենի» առարկայի թեստը պարունակում է տասը առաջադրանք, յուրաքանչյուր առաջադրանքի և ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր: Թեստի առավելագույն միավորը 15 է, թեստի կատարմանը հատկացվում է 60 րոպե: «Մաթեմատիկա» առարկայի թեստը կազմված է տասնյոթ առաջադրանքից: 1-ից 15 առաջադրանքներին տրվում է 1 միավոր, 16-րդ առաջադրանքին՝ 2 միավոր, 17-րդ առաջադրանքին՝ 3 միավոր: Թեստի առավելագույն միավորը 20 է: Թեստի կատարմանը հատկացվում է 60 րոպե: Զեկուցողը հավելեց, որ տարրական դասարանների մեթոդմիավորումը հիմք ընդունելով ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշները՝ կազմել է առնվազն ութ տարբերակ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը հավանություն տվեց 4-րդ դասարանի աշակերտների «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից գիտելիքների ստուգման հարցատոմսերին:

Որոշեցին՝ Հաստատել 4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման հարցատոմսերը (կցվում է):

Լսեցին 5. 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի հարցը:

(զեկուցող՝ Ռ Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 120-200 դասաժամ բացականեր ունեցող աշակերտների հետ կապված կարգը: Նշեց, որ տարրական դասարաններում

120 և ավելի ժամ բացակայություն ունեցող աշակերտ կա 4-րդ «Բ» դասարանում:

Արտահայտվեցին՝ Անահիտ Աղաբեկյան, դասվարներ

Աղաբեկյանը նշեց, որ Նարեկ Վահիկի Դալլաքյանի բացակայությունները 120-200 դասաժամ է: Նշեց, որ արդեն կազմված են վերաքննության թեստերը և բոլոր առարկաների համար աշակերտը կհանձնի վերաքննություն:

Դասվարները նշեցին, որ տարրական դասարաններում անհարկի բացակայություններ չեն լինում, բացակայում են բացառապես հիվանդության կամ շատ կարևոր պատճառով:

Որոշեցին՝ Հաստատել 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի վերաքննության ստուգողական աշխատանքների, ստուգարքի և քննական հարցաշարերը, հարցատոմսերն ու ժամանակացույցը (հարցատոմս՝ էլեկտրոնային, ժամ.՝ առդիր):

Լսեցին 6. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից ազատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 4-րդ «Բ» դասարանի աշակերտներ՝ Լեո Խաչյանը և Էլինա Հարությունյանը, 4-րդ «Գ» դասարանի աշակերտներ՝ Արեն Տատինցյանը և Ալեքս Բաբայանը և 4-րդ «Դ» դասարանի աշակերտ՝ Տիգրան Հարությունյանը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ են և աշակերտների ծնողները դիմում են ներկայացրել, որով խնդրել են իրենց երեխաներին ազատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից :

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ նշված աշակերտների ծնողների դիմումի համաձայան նրանց պետք է ազատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

Որոշեցին՝ Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ 4-րդ դասարանների ԿԱՊԿՈՒ աշակերտներին ազատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից:

Լսեցին 7. Մանկավարժական զեկուցում՝ «Դաստիարակության մեթոդների կիրառումը տարրական դասարաններում»: թեմայով:

(զեկուցող՝ Ա. Դոլունց)

Զեկուցողը ներկայացնելով թեման՝ կարևորեց արդիականությունը, նշեց, որ հետազոտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ դաստիարակության գործընթացը, մշտապես ենթարկվելով հասարակական կյանքի մարտահրավերներից բխող փոփոխություններին, պահանջում է նորովի մոտեցումներ, շարունակական կատարելագործում կազմակերպման, իրականացման եղանակների՝ մեթոդների: Ուստի դաստիարակության մեթոդների կիրառման առանձնահատկությունների բացահայտումը տարրական դասարաններում ժամանակի հրամայական է:

Արտահայտվեցին՝ Գայանե Ավագյանը, Ալինա Միքայելյանը

Արտահայտվողները նշեցին, որ թեման շատ արդիական էր, հետաքրքիր և ուսուցողական:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Դաստիարակության մեթոդների կիրառումը տարրական դասարաններում» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11

«30» մայիսի 2024թ. քաղ. Գորիս

<u>Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.</u>

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Պողոսյա Կարինե
4. Գալստյան Նունե
5. Աղաբեկյան Անուշ
6. Մալխասյան Կարինե
7. Ավագյան Գայանե
8. Գրիգորյան Վարդ
9. Միքայելյան Ալինա
10. Փարսադանյան Տաթևիկ
11. Աղաբեկյան Անահիտ
12. Հարությունյան Արմինե
13. Ջավահիրյան Իրինա

Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 1-ին դասարաններում «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումների անցկացման մասին հարցը:
(զեկուցողներ՝Կ. Պողոսյան, Ա. Դոլունց, Ռ. Շալունց)
4. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկման մասին:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի

արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 1-ին դասարաններում «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումների անցկացման մասին հարցը:

(զեկուցողներ՝Կ. Պողոսյան, Ա. Դոլունց, Ռ. Շալունց)

Զեկուցողները նշեցին, որ 1-ին դասարաններում «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումների անցկացման համար բոլոր դասարաններում տարվել կազմակերպչական աշխատանքներ: Աշակերտներին տրվել են բանաստեղծություններ նվիրված հայոց գրերին, Մաշտոցին, դպրությանն ու հայրենիքին, սովորել էին թեմատիկ երգեր և պարեր: Բեմականացրել են հայոց գրերի ստեղծման պատմությունից հատվածներ և իրենց երգ ու պարով, ասմունքով ներկայացրեցին մեկ տարվա ձեռքբերումները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Կ. Մալխասյանը

Արտահայտվողները փաստեցին, որ միջոցառումները կազմակերպված էին բարձր մակարդակով, աշակերտների ելույթները հղկված էին և ամեն դասարան իր յուրօրինակ ելույթներով հիացրեցին ներկա հյուրերին, ծնողներին և ուսուցիչներին:

Ավանեսյանն նշեց. քանի որ միջոցառման օրերը համընկնում են «Վերջին զանգ»-ի հետ և, որպեսզի մեկը մյուսին չխանգարի, այսուհետ միջոցառումները կազմակերպել ավելի վաղ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 1-ին դասարաններում «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումների անցկացման մասին զեկուցումը:

Լսեցին 4. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը կարևորեց 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները՝ կապված ՀՊՉ ներդրման գործընթացի հետ: Նշեց, որ կատարած դիտարկումները, քննարկումներն ու դասալսումները միայն դրական նշանակություն և մեծ աջակցություն եղան 2-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար: Զեկուցողի կողմից նշվեց երկամսյա ամփոփումների կարևորության մասին: Նախապես պլանավորված աշխատանքների կազմակերպման ընթացքում պարզ դարձան այն արդյունքներն ու հաջողությունները, որոնք արձանագրվեցին տարեվերջին: Ի սկզբանե ՀՊՉ ներդրման գործընթացում կային մի շարք անհասկանալի հարցեր՝ կապված ծրագրերի, գնահատման համակարգի փոփոխությունների, թեմատիկ պլանների, ՕԴՊ-ների՝ ճիշտ կազմելու և մի շարք այլ հարցերի հետ: Միայն կազմակերպված քննարկումների, դասալսումների, ուսումնական մասի ղեկավար Սերգեյ Ավանեսյանի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացի, և տրամադրվող խորհրդատվությունների արդյունքում հնարավոր եղավ հասնել դրական արդյունքի:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կատարված դասալսումների արդյունքների քննարկումների ժամանակ վեր հանված խնդիրները, ուսումնական մասի ղեկավար՝ Սերգեյ Ավանեսյանի կողմից տրամադրվող խորհրդատվությունները: Նշվեց նաև, որ ՕԹՊ-ներ կազմելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ամփոփումներին և գնահատման պահանջներին՝ ըստ ՀՊՉ-ների:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին զեկուկույցը:

Լսեցին 5. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում երկարօրյա ուսուցման խմբակ է կազմակերպվել 2-րդ, 5-րդ դասարանների 22 աշակերտի համար: Երկարօրյա ուսուցման խմբակներում աշակերտների ընդգրկման համար հիմք են հանդիսացել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, որտեղ սահմանված է, որ 2-րդ դասարաններից ընդգրկվում են այն աշակերտները, որոնք ունեցել են առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ, իսկ 5-րդ և 7-րդ դասարաններից այն աշակերտները, որոնք երկու անգամ անընդմեջ ունեցել են 1-3 գնահատական: Զեկուցողը հավելեց, որ իր և ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի կողմից պարբերաբար իրականացվել են ընթացիկ դիտարկումներ և իրականացված աշխատանքները գոհացուցիչ են:

Զեկուցողը նաև ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի փետրվար-մայիս ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների մասին, դասապրոցեսի պատշաճ կազմակերպման, անցկացման և արդյունքների մասին: Կարևորվեց նաև երկարօրյա ուսուցմա խմբակ ունեցող ուսուցիչների կողմից ներկայացված հաշվետվությունները, որոնց միջոցով ամփոփվեցին նաև 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներն ու արձանագրված արդյունքները:

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները

Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, անդրադարձան իրականացման ընթացքում առաջացած խնդիրներին, ձեռքբերումներին ու արդյունքներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 6. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված էլեկտրոնային մատենավարության հետ կապված բացթողումների ու թերությունների մասին: Նշեց, որ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են ՕԹՊ-ների և ՕԴՊ-ների անհամապատասխանություններ, նշանակված մի շարք գնահատականներ չեն պահպանվել՝ տեխնիկական խնդիրների պատճառով: Ամփոփելով 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված մատենավարության ստուգման աշխատանքները ՄՄ նախագահ Ռիտա Շալունցը նշեց, որ այս հարցում ուսուցիչների մոտ ավելի քիչ թերություններ են արձանագրվել, քան նախորդ տարիներին:

2-րդ դասարանների դասվարները նշեցին, որ թեպետ նոր չափորոշչով աշխատանքը նոր էր, սակայն բոլոր աշխատանքները կատարվել են անսխալ, ժամկետներին համապատասխան:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը կարևորվեց յուրաքանչյուր ուսուցչի անհատական և պատասխանատու վերաբերմունքի անհրաժեշտությունը մատենավարության գործում: Նշեց, որ ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրվում են

թերություններ, հավելելով, որ պետք է վերահսկել ուսուցիչների կողմից կատարվող ամենօրյա աշխատանքները և մատենավարության հետ կապված խնդիրները վեր հանել, քննարկել, ժամանակին կատարել ուղղումներ:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը
- Լինել հետևողական ՕԹՊ-ների, ՕԴՊ-ների և կատարվող գրանցումների համապատասխանության հարցում:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 12

«21» հունիսի 2024թ. ք. Գորիս

<u>Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.</u>

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե

Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, տարրական դպրոցի մակարդակում իրականացվող խմբակների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)
7. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ ՄՄ անդամներ)
8. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
9. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքներն ու խնդիրները:
(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)
10. 2024-2025 ուսումնական տարվա նախնական դասաբաշխում:
(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ռ. Շալունց)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման ամփոփ նկարագիրը, նշեց, որ հունիսի 7-ին «Մայրենի» և հունիսի 11-ին «Մաթեմատիկա» առարկաներից իրականացվել է գիտելիքների ստուգում 4-րդ «Ա», «Բ», «Գ» և «Դ» դասարաններում: Գիտելիքների ստուգմանը մասնակցել են տվյալ դասարանների բոլոր աշակերտները, բացառությամբ՝ ԿԱՊԿՈՒ 5 աշակերտների, որոնք ազատվել են գիտելիքների ստուգումից՝ ծնողների դիմումի համաձայն: Զեկուցողը հավելեց, որ արդյունքները գոհացուցիչ են:

Արտահայտվեցին՝ Տ. Փարսադանյանը, Ա. Աղաբեկյանը, Ա. Հարությունյանը, Ի. Ջավահիրյանը

Արտահայտվողները ներկայացրին 4-րդ «Ա», «Բ», «Գ» և «Դ» դասարանների արդյունքները, կարևորեցին բացթողումների արձանագրումը, առաջացած խնդիրների շուրջ քննարկումները: Շեշտվեց, որ 2024-2025 ուսումնական տարում գիտելիքների ստուգումը բարձր մակարդակով անցկացնելու համար պետք է միջոցներ ձեռնարկել աշակերտների պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, ստրեսակայունություն ձևավորելու ուղղությամբ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ երկու կիսամյակների ընթացքում կատարված ստուգումները, ամենշաբաթյա վերահսկողությունը, փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի կողմից աջակցությունը, քննարկումները և հարցերի պարզաբանումները փոփոխություններ են արձանագրել էլեկտրոնային մատենավարության հարցում:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Որոշակի խնդիրներ կարելի է ասել հաղթահարվեցին՝ գրանցումներն ու գնահատումները կատարվեցին թեթևակի շեղումներով: Սակայն, որոշ շարունակում եմ թերություններով աշխատել, որոնք հիմնականում կապված են թեմաների ուշ լրացման, հաստատված ՕԹՊ-ներից որոշակի շեղումների հետ, սակայն շեշտեց, որ ի տարբերություն 2022-2023 ուսումնական տարվա,

2023-2024 ուսումնական տարում արձանագրված թերություններն ու բացթողումները անհամեմատ քիչ են:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա էլեկտրոնային մատենավարության վարման արդյունքները:

Լսեցին 5. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում «Տարրական դասարանների մեթոդմիավորման» ուսուցիչների կողմից կազմակերպված բաց դասերի, բաց դաս-միջոցառումների ամփոփ կատարողականը: Նշեց, որ կազմակերպված դասերն ու միջոցառումները ուսուցանող էին, երեխաները յուրաքանչյուր միջոցառման ընթացքում ի ցույց էին դնում իրենց գիտելիքները, արտասանական ունակությունները և գիտելիքները:

Զեկուցողը ներկայացրեց միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ցուցադրական դասերը պետք է լինեն ծրագրավորված, ուսուցիչը պետք է հաշվի առնի դասի ընթացքի հնարավոր տարբերակները, բայց ոչ երբեք նույն դասը արդեն նախապես անցկացրած լինի և դա բազում փորձերի վրա հիմնված դաս-շոուի վերածվի: Նշեց, որ պետք է հետևել հաստատված նվազագույն պահանջներին և համապատասխան այդ ցանկի ապահովել բաց դասերի, դաս միջոցառումների կատարողականը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը:

Լսեցին 6. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Արմիդա Գևորգյանը կարևորեց 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքը նշելով, որ եղել են դեպքեր, երբ որոշ խմբավարներ խմբակները սահմանված օրերում չեն իրականացրել: Գևորգյանն անդրադարձավ նաև խմբակների մատենավարությանը, նշեց, որ և՛ ընթացքում, և՛ ամփոփման ժամանակ արձանագրվել են թերություններ:

Խմբավարներն առանձին-առանձին ներկայացրեցին 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները՝ հաշվետվությունների տեսքով:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյան

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց խմբակների գործունեության արդյունքները, ինչպես նաև շեշտեց, որ անհրաժեշտ է վերլուծել խմբակների գործունեությունը, դուրս բերել խնդիրները և հաջորդ ուսումնական տարիներին աշխատել այնպես, որ այդ խնդիրներն այլևս չկրկնվեն: Ավանեսյանն անդրադարձավ իր և Գևորգյանի կողմից ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված դիտարկումներին, որոնք իրականացվել են խմբակների դասերի ընթացքում: Շեշտեց, որ հիմնականում արդյունքները գոհացուցիչ են, ինչպես նաև հավելեց, որ որոշ խմբակներում աշակերտների մասնակցությունն ու հետաքրքրվածությունն էլ ավելի բարձր է, քան մյուսներում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը:

Լսեցին 7. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ ՄՄ անդամներ)

Մեթոդմիավորման նախագահը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու բացթողումները, ինչպես նաև ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացված և չիրականացված աշխատանքները:

Մեթոդմիավորման անդամները ներկայացրին իրենց հաշվետվությունները, ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները, ամփոփեցին արդյունքները: Առաջացած խնդիրներն ու հարցերը քննարկվեցին: Ուսուցիչները մանրամասն ներկայացրեցին նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքները, շեշտեցին, որ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում աշակերտների հետ աշխատել են նաև դիտարկման թերթիկներով, որոնք նույնպես արդյունավետ են:

Արտահայտվեցին՝ Գ. Ավագյանը, Ա. Աղաբեկյանը, Ի. Ջավահիրյանը

Արտահայտվողները կարևորեցին ծավալված քննարկումները և մեթոդմիավորման նիստում հաշվետվությունների վերլուծությունը: Կարևորվեց նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքների վերլուծությունը, ուսուցիչ-ուսուցչի օգնական կապը: Նշվեցին տարվա ընթացքում առաջացած խնդիրները կապված ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ, ինչպես նաև շեշտվեց Սերգեյ Ավանեսյանի կողմից մշակված դիտարման թերթիկներով աշխատանքի արդյունավետությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

Լսեցին 8. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները, կարևորեց քննարկված արձանագրությունների արդյունքները:

Զեկուցողը նշեց նաև հաջողված դասերի մասին: Կարևորվեց նաև դասալսումներին ուսումնական մասի ղեկավար Սերգեյ Ավանեսյանի, մեթոդմիավորման մյուս ուսուցիչների, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումների անդամների մասնակցությունը և դրանց արդյունքում ծավալված քննարկումները:

Արտահայտվեցին՝ Ա. Հարությունյանը

Արմինե Հարությունյանը նշեց, որ դասալսումներն ու կազմակերպված քննարկումներն օգնում են դասի արդյունավետության բարձրացմանը, թերությունների շտկմանը և փորձի փոխանակմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 9. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)

Զեկուցողները բոլորի ուշադրությունը հրավիրեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքների վրա: Ծատրյանը ներկայացրեց երեխաներից որոշների մոտ առաջացած խնդիրները և կատարված աշխատանքները: Քննարկվեցին տարվա ընթացքում արձանագրված ձեռքբերումներն ու բացթողումները: Արփինե Ծատրյանը նշեց, որ ուսուցիչների կողմից պատշաճ լրացվել են ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ները, ինչպես նաև ուսումնական տարվա ընթացքում Ավանեսյանի կողմից մշակված դիտարկման թերթիկներով դպրոցի բոլոր դասարաններում իրականացվել են դիտարկումներ և աշակերտների մոտ խնդիրների առկայության դեպքում ուսուցիչների և ուսուցչի օգնականների հետ համապեղ իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ սահմանված վերջնարդյունքներին հասնելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Ի. Ջավահիրյանը, Ա. Աղաբեկյանը, Ն. Գալստյանը

Արտահայտվողները կարևորեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող յուրաքանչյուր աշխատանք, նշեցին, որ այն պետք է լինի շարունակական:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների կողմից իրականացված աշխատանքների մասին զեկուցումը:

Լսեցին 10. 2023-2024 ուսումնական տարվա նախնական դասաբաշխման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ռ. Շալունց)

Զեկուցող Սերգեյ Ավանեսյանը հանգամանալից ներկայացրեց այն բոլոր փոփոխությունները որոնք սպասվում են նոր ուսումնական տարում՝ կապված նոր չափորոշչային պահանջների հետ: Զեկուցողը խոսեց նաև այն մասին, որ 4-րդ դասարաններն ավարտել է 4 դասվար, սակայն եթե նոր ուսումնական տարում աշակերտների ծանրաբեռնվածության սահմանային թվի հետ փոփոխություն չլինի, 4 դասվարներից 1-ը կմնա առանց դասարանի, և հետևաբար չի կարող շարունակել իր աշխատանքը:

Զեկուցող Ռիտա Շալունց նշեց, որ 2023-2024 ուսումնական տարում 1-ին և 4-րդ դասարաններում նախնական դասաբաշխումը պետք է իրականացվի հին չափորոշիչներով, իսկ 2-րդ և 3-րդ դասարաններում՝ նոր չափորոշիչներով, համապատասխան որի որոշ առարկաների ժամաքանակի մեջ տեղի են ունեցել փոփոխություններ: Ռիտա Շալունցը նշեց նաև, որ որպես մենթոր պատրաստ է աջակցել մեթոդմիավորման բոլոր անդամներին, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումներում ընդգրկված բոլոր ուսուցիչներին նոր չափորոշիչներով աշխատանքները պատշաճ կազմակերպելու ուղղությամբ:

Արտահայտվեցին՝ Կ. Պողոսյանը

Կարինե Պողոսյանը նշեց, որ անհրաժեշտ է հաշվի առնել 3-րդ դասարաններում սպասվող փոփոխությունները՝ կապված տարրական դասարանների մեթոդմիավորման և մյուս մեթոդմիավորումներում ընդգրկված առարկաների առարկայական փոփոխությունների հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանումը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում *Տարրական դասարանների մեթոդմիավորումը* գումարել է *12 նիստ*, որոնց համար կազմվել է *12 արձանագրություն։*

Տարրական դասարանների մեթոդմիավորման նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	24.08.2023	11
2	2	19.09.2023	8
3	3	11.10.2023	9
4	4	13.11.2023	6
5	5	25.12.2023	11
6	6	26.01.2024	7
7	7	28.02.2024	5
8	8	27.03.2024	6
9	9	25.04.2024	8
10	10	10.05.2024	7
11	11	30.05.2024	6
12	12	21.06.2024	10

Տարրական դասարանների մեթոդմիավորման սույն արձանագրությունների մատյանը կազմված է *62* էջից։

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«21» հունիսի 2024թ.